*Հավելված*
*Հաստատվել է ՀՀ ՀՊ*
*2019թ. օգոստոսի 09-ի թիվ 17/1*
*որոշմամբ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ**

# ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՆԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019

| | |
|---|---|
| **Հաշվեքննության հիմքը** | ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 19/9 և 2019 թվականի մարտի 29-ի թիվ 7/7 որոշումներ: |
| **Հաշվեքննության օբյեկտը** | ՀՀ ոստիկանություն: |
| **Հաշվեքննության առարկան** | Պետական պահպանության գլխավոր վարչության ֆինանսատնտեսական գործունեություն: |
| **Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը** | 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը: |
| **Հաշվեքննության կատարման ժամկետը** | 2019 թվականի հունվարի 14-ից մինչև օգոստոսի 1-ը: |
| **Հաշվեքննության մեթոդաբանությունը** | Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը: |
| **Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում** | Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի իններորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Գագիկ Ոսկանյանը: |

# I. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 9-րդ վարչությունը, հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի և 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթները, ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն է իրականացրել ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության 2017 և 2018 թվականների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ:

### *Ղեկավարության պատասխանատվությունը*

ՀՀ ոստիկանության ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ բյուջետային դասակարգումների և դրանց կիրառման ցուցումների համաձայն, ինչպես նաև Նախարարության ֆինանսատնտեսական գործունեությունը իրավական ակտերին, քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխան իրականացնելու համար: ՀՀ ոստիկանության ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը իր կարծիքով, թույլ է տալիս պատրաստել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

### *Հաշվեքննողի պատասխանատվությունը*

Հաշվեքննողների պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Հաշվեքննությունն անցկացվում է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության ստանդարտներով: Հաշվեքննության ընթացքում անհրաժեշտ է հետևել վարքագծի սկզբունքների պահանջներին, և հաշվեքննությունը պլանավորել ու իրականացնել այնպես, որպեսզի ձեռք բերվի ողջամիտ երաշխիք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից և անհամապատասխանություններից զերծ լինելու վերաբերյալ:

Հաշվեքննության ընթացքում կատարվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության վերաբերյալ հաշվեքննության ապացույցի ձեռքբերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ խարդախության կամ սխալի կամ անհամապատասխանության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման և ֆինանսատնտեսական գործունեության մեջ էական անհապատասխանություն-ների ռիսկերի գնահատումը:

### *Ոչ լիարժեք եզրահանգման հիմքեր*

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության ֆինանսատնտեսական գործունեության մեջ հաշվեքննությամբ հայտնաբերվել են էական անհամապատասխանություններ: Մասնավորապես.

- 2017 և 2018 թվականներին ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության վեց ստորաբաժանումների աշխատողներ պետական բյուջեի՝ «ՀՀ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների,

ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանություն» ծրագրով ըստ նորմատիվների հաշվարկված 215,960.6 հազ. դրամ միջոցների հաշվին իրականացրել են տնտեսավարողների հետ կնքված պայմանագրերի շրջանակներում արտաբյուջետային գործառույթներ:

- Պահպանության ծառայության մատուցման պայմանագրերում վճարումների ուշացումների համար տույժեր հիմնականում սահմանված չեն, և պայմանագրային հիմունքներով ծառայությունների մատուցման դիմաց ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության ստորաբաժանումների դեբիտորական պարտքը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 94,090.8 հազ. դրամ, իսկ 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ կրկնապատկվել ու կազմել է 204,939.3 հազ. դրամ:
- 2017 և 2018 թվականներին ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը ստորաբաժանումներից ստացել է սահմանված չափաքանակից ավելի մասհանումներ համապատասխանաբար՝ 77,641.3 հազ. դրամ և 24,277.8 հազ. դրամ:
- 2017 և 2018 թվականներին առանձին դեպքերում պահպանության ծառայությունների մատուցման պայմանագրերը կնքվել են ՀՀ կառավարության 22.01.2015թ. թիվ 25-Ն որոշմամբ՝ ոստիկանների և հրաձիգների համար սահմանված ծախսերի նորմատիվներից պակաս գնով:

### *Եզրահանգում*

Հաշվեքննության ընթացքում ձեռք են բերվել և արձանագրվել են բավարար ապացույցներ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի բ. ենթակետի դրույթին համապատասխան ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքը հիմնավորելու համար:

ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքով ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության 2017 և 2018 թվականների հաշվետվություններն արժանահավատ են, էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել և հաշվեքննության ֆինանսական տեսակի առումով տրվում է դրական եզրահանգում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքով ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը 2017 և 2018 թվականների ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում թույլ է տվել էական անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն և հաշվեքննության համապատասխանության տեսակի առումով տրվում է ոչ լիարժեք եզրահանգում:

Գագիկ Ոսկանյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
09 օգոստոսի 2019թ.
ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

## II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

### ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության վերաբերյալ

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը (այսուհետ՝ ՊՊԳ վարչություն) «ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.04.2004թ. թիվ 1008-Ն որոշման համաձայն պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացնում է պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների պետական պահպանությունը (հավելված 1)։ Կարևորագույն նշանակության օբյեկտների պետական պահպանությունը ՊՊԳ վարչությունը իրականացնում է արտաբյուջեի շրջանակում՝ կնքված պայմանագրերով տնտեսավարողների միջոցների հաշվին, բացառությամբ Նուբարաշենի թունաքիմիկատների

գերեզմանոցի, որի պահպանությունը, ի տարբերություն մնացած կարևորագույն նշանակության օբյեկտների, ևս իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին (հավելված 2): Հաշվեքննությամբ պարզվել է, որ ՊՊԳ վարչությունը տարիներ շարունակ չի իրականացրել ՀՀ կառավարության 29.04.2004թ. թիվ 1008-Ն որոշմամբ ՀՀ ոստիկանության կողմից պահպանության ենթակա պետական մարմինների շենքերի ու շինությունների ցանկում ընդգրկված ՀՀ Ազգային ժողովի շենքի՝ հարակից շինություններով, ՀՀ առաջին ատյանի դատարանների ու նրանց նստավայրերի, տնտեսական դատարանի Երևանի, Գյումրու, Վայքի, Սևանի, Վեդու նստավայրերի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների շենքերի պետական պահպանությունը:

Հաշվեքննությամբ պարզվել է նաև, որ ՊՊԳ վարչությունը պետական բյուջեի զգալի միջոցների հաշվին տարիներ շարունակ իրականացրել է «Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ-ի (ք.Երևան, Աբովյան փողոց 64) պահպանությունը, որը ընդգրկված չէ պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների ցանկում:

«ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 11.01.2007թ. թիվ 151-Ն որոշմամբ սահմանվել է պարեկապահակային ծառայության կազմակերպման համար վերակարգերի ամենօրյա ծառայության ելքի քանակը: Բացի այդ, ՀՀ կառավարության 22.01.2015թ. թիվ 25-Ն որոշմամբ հաստատվել են ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության ապահովման ծառայությունների իրականացման տարեկան ծախսերի նորմատիվները, ըստ որի՝ ՊՊԳ վարչության միջին խմբի մեկ ոստիկանի համար տարեկան ծախսի նորմատիվը կազմում է 3,268.0 հազ. դրամ, կրտսեր խմբի մեկ ոստիկանի ծախսի նորմատիվը՝ 2,360.4 հազ. դրամ և մեկ հրածգի ծախսի նորմատիվը՝ 1,178.2 հազ. դրամ: ՀՀ կառավարության այդ որոշումների հիման վրա հաշվարկվում է պետական պահպանության ենթակա յուրաքանչյուր օբյեկտի պահպանության համար անհրաժեշտ անձնակազմը և տարեկան ծախսը: ՊՊԳ վարչության վեց ստորաբաժանումների զննման ընթացքում արձանագրվել է, որ պետական բյուջեի միջոցների հաշվին օբյեկտների պետական պահպանությունը իրականացվել է ՊՊԳ վարչության և

ենթակա ստորաբաժանումների կողմից կնքված պայմանագրերով սահմանվածից պակաս անձնակազմով (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

2017 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին պահպանվող օբյեկտների պայմանագրերով սահմանվածից պակաս անձնակազմ

| Ստորաբաժանման անվանումը | Պակաս անձնակազմ | |
|---|---|---|
| | կրտսեր խմբի ոստիկան (միավոր) | հրաձիգ (միավոր) |
| Էրեբունու պահպանության բաժին | 17.40 | - |
| Կենտրոնական պահպանության բաժին | 15.00 | 3.14 |
| Մալաթիայի պահպանության բաժին | 17.05 | - |
| Հրազդանի պահպանության բաժին | 8.29 | 3.75 |
| Կոտայքի պահպանության բաժին | 2.09 | - |
| Աշոցքի պահպանության բաժանմունք | 2.00 | - |
| Ընդամենը | 61.83 | 6.89 |

Պարզվել է, որ 2017 թվականին ոստիկանի առկա երեք թափուր հաստիքների պայմաններում բյուջետային հաստիքներ զբաղեցնող 58 կրտսեր խմբի ոստիկաններ և 7 հրաձիգներ պետական բյուջեի միջոցների հաշվին պետական պահպանության ենթակա օբյեկտների պահպանություն իրականացնելու փոխարեն ներգրավվել են տնտեսավարողների հետ արտաբյուջեի շրջանակում կնքված պայմանագրերով պահպանվող օբյեկտների վերակարգերում, սակայն վարձատրվել են պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին, որը ըստ ծախսերի նորմատիվների 2017 թվականի համար կազմում է 145,150.6 հազ. դրամ, 2018 թվականի համար՝ 70,810.0 հազ. դրամ: Փաստորեն, 2017 և 2018 թվականներին ՊՊԳ վարչության վեց ստորաբաժանումների աշխատողներ պետական բյուջեի՝ «ՀՀ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանություն» ծրագրով ըստ նորմատիվների հաշվարկված 215,960.6 հազ. դրամ միջոցների հաշվին իրականացրել են տնտեսավարողների հետ կնքված պայմանագրերի շրջանակներում արտաբյուջետային գործառույթներ:

ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի մաս կազմող ՊՊԳ վարչության բոլոր 140 հաստիքները, ներառյալ՝ գլխավոր վարչության պետի

հաստիքը, ի տարբերություն ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի մնացած ստորաբաժանումների, սահմանված են որպես արտաբյուջետային հաստիքներ: Փաստորեն, յուրաքանչյուր տարի պետական բյուջեից ավելի քան 3,000,000.0 հազ. դրամի չափով ֆինանսավորման պայմաններում ՊՊԳ վարչության պահպանման ծախսերի համար պետական բյուջեից միջոցներ չեն նախատեսվում և դրանք կատարվում են ենթակա ստորաբաժանումների արտաբյուջետային եկամուտներից մասհանումների հաշվին:

ՀՀ ոստիկանության պետի 27.03.2017թ. թիվ 807-Ա և 04.04.2018թ. թիվ 1079-Ա հրամաններով սահմանվել է, որ ստորաբաժանումների մասհանումները ՊՊԳ վարչությանը չպետք է գերազանցեն տվյալ ստորաբաժանման տարեկան եկամտի 7%-ը: ՊՊԳ վարչության պետի 31.07.2017թ. թիվ 1131-Ա և 17.04.2018թ. թիվ 910-Ա հրամաններով սահմանվել են ստորաբաժանումների կողմից կատարվող մասհանումների չափաքանակները, որը 2017 և 2018 թվականների համար կազմել է համապատասխանաբար՝ 410,593.7 հազ. դրամ և 275,240.8 հազ. դրամ (հավելված 3): Ձննումը ցույց է տվել, որ 2017 և 2018 թվականներին ստորաբաժանումների կողմից կատարված մասհանումները չեն համապատասխանում սահմանված չափաքանակներին՝ էական ավելի կամ պակաս են, իսկ առանձին ստորաբաժանումներ մասհանումներ չեն կատարել.

- Կենտրոնական պահպանության բաժինը 2017 թվականի համար սահմանված 32,904.0 հազ. դրամի փոխարեն փաստացի կատարել է 59,439.6 հազ. դրամ մասհանում, 2018 թվականին՝ 32,496.0 հազ. դրամի փոխարեն՝ 63,493.6 հազ. դրամ մասհանում, որը կազմում է բաժնի եկամուտների համապատասխանաբար՝ 12.4%-ը և 12.8%-ը:
- Քանաքեռ-Զեյթունի պահպանության բաժինը 2017 թվականի համար սահմանված 12,300.0 հազ. դրամի փոխարեն փաստացի կատարել է 8,681.4 հազ. դրամ մասհանում, 2018 թվականին՝ սահմանված 8,472.0 հազ. դրամի դիմաց՝ մասհանում չի կատարել:
- Մասիսի պահպանության բաժանմունքը 2018 թվականին սահմանված 2,640.0 հազ. դրամի դիմաց մասհանում չի կատարել:

Վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ 2017 և 2018 թվականներին ՊՊԳ վարչությունը ստորաբաժանումներից ստացել է սահմանված չափաքանակից ավելի մասհանումներ համապատասխանաբար՝ 77,641.3 հազ. դրամ և 24,277.8 հազ. դրամ:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ պահպանության ծառայության մատուցման պայմանագրերում վճարումների ուշացումների համար տույժեր հիմնականում սահմանված չեն, և պայմանագրային հիմունքներով ծառայությունների մատուցման դիմաց ՊՊԳ վարչության ստորաբաժանումների դեբիտորական պարտքը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 94,090.8 հազ. դրամ, իսկ 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ կրկնապատկվել ու կազմել է 204,939.3 հազ. դրամ, որը ենթակա է վճարման պայմանագրի կողմ հանդիսացող տնտեսավարողների կողմից (հավելված 4):

ՊՊԳ վարչության կառուցվածքում, բացի պահպանություն իրականացնող ստորաբաժանումների, որպես ենթակա ստորաբաժանում գործում է ավտոտնտեսության բաժանմունքը, որին ամրակցված են ՊՊԳ վարչության բոլոր տրանսպորտային միջոցները: Ավտոտնտեսության պահպանման ծախսերի համար ֆինանսավորման աղբյուր ստեղծելու նպատակով տրանսպորտային միջոցները կնքված պայմանագրերով ֆորմալ ձևակերպվել են որպես վարձատվություն և տրամադրվել են ՊՊԳ վարչությանը ու ենթակա ստորաբաժանումներին, որոնք տրանսպորտային միջոցները վարձակալելու դիմաց վճարել են ամսական վարձավճարներ: ՊՊԳ վարչության ֆինանսական հոսքերը օպտիմալ կառավարելու համար նպատակահարմար է տրանսպորտային ծառայությունների ծախսերը իրականացնել ստորաբաժանումների կողմից ՊՊԳ վարչությանը կատարվող մասհանումներում դրանք նախատեսելու միջոցով:

2017 թվականին «Տրանսպորտային սարքավորումներ» հոդվածով ավտոտնտեսությունը «Ռենա» ՍՊԸ-ից 106,200.0 հազ. դրամով ձեռք է բերել 18 հատ IKCO SOREN ավտոմեքենաներ:

Ավտոտնտեսությանը ամրակցված տրանսպորտային միջոցներից 2017 թվականին անսարք էին և չեն շահագործվել 17-ը: ՀՀ ոստիկանության պետի 18.12.2017թ. և 06.03.2018թ. հրամաններով դուրս են գրվել 12 տրանսպորտային միջոցներ: 2018 թվականին անսարք էին 13 տրանսպորտային միջոցներ, որոնք չեն շահագործվել, սակայն առ հաշվեքննության պահը չեն դուրսգրվել:

2017 և 2018 թվականներին ավտոտնտեսության արտաբյուջետային հաշվին մուտք է եղել համապատասխանաբար՝ 335,079.6 հազ. դրամ և 288,786.1 հազ. դրամ, որի հաշվին կատարվել են «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում», «Տրանսպորտային նյութեր» ու «Տրանսպորտային սարքավորումներ» հոդվածների ծախսերը:

2017 թվականին ավտոտնտեսությունը ՀՀ ոստիկանության կողմից կնքված պայմանագրերի շրջանակներում «Տրանսպորտային նյութեր» հոդվածով «Սի Փի Էս Քորփորեյշն» ՍՊԸ-ից գնել է 150,489.0 հազ. դրամի 501630 լիտր ռեգուլյար տեսակի բենզին և «Մաքսիուր» ՍՊԸ-ից՝ 682.7 հազ. դրամի 2070 լիտր պրեմիում տեսակի բենզին: 2018 թվականին ավտոտնտեսությունը «Ֆլեշ» ՍՊԸ-ից և «Սի Փի Էս Քորփորեյշն» ՍՊԸ-ից գնվել է 202,796.8 հազ. դրամի 502964.5 լիտր ռեգուլյար տեսակի բենզին: «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածով ավտոմեքենաների նորոգման համար ավտոտնտեսությունը 2017 թվականին վճարել է «Գարանտսերվիս» ՍՊԸ-ին 15,181.5 հազ. դրամ, 2018 թվականին «Ֆլեշ Մոթորս» ՍՊԸ-ին՝ 14,000.0 հազ. դրամ:

2017 և 2018 թվականներին ավտոտնտեսության 12 հաստիքային միավորների (որից 3 հաստիքները մշտապես թափուր) վարձատրության ծախսերը արտաբյուջետային միջոցների հաշվին կազմել են համապատասխանաբար՝ 15,558.1 հազ. դրամ և 16,121.9 հազ. դրամ: Բացի այդ, «Էներգետիկ ծառայություններ» և «Կապի ծառայություններ» հոդվածներով ավտոտնտեսության ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 945.1 հազ. դրամ և 595.1 հազ. դրամ:

Հաշվի առնելով, որ տրանսպորտային միջոցների նորոգումները կատարվում են մասնագիտացված կազմակերպությունների կողմից, իսկ վառելիքը ձեռք է բերվում և բաշխվում է կտրոններով, տարեկան ավելի քան 16,500.0 հազ. դրամ արտաբյուջետային միջոցները տնտեսելու համար հնարավոր է օպտիմալացնել ՊՊԳ վարչության կառուցվածքը ու հաստիքացուցակը, վերանայելով վարչության կառուցվածքում ավտոտնտեսության բաժանմունքի առկայության անհրաժեշտությունը:

**ՊՊԳ վարչության Կենտրոնական պահպանության բաժնի վերաբերյալ**

ՊՊԳ վարչության Կենտրոնական պահպանության բաժնի (այսուհետ՝ Կենտրոնական պահպանության բաժին) ծառայության գրաֆիկների և վերակարգերի մատյանների զննումը ցույց է տվել, որ 2017 թվականին ինը պայմանագրերով պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների պահպանությունը իրականացվել է սահմանվածից կրտսեր խմբի ոստիկանի՝ 15.00 միավոր և հրաձգի 3.14 միավոր պակաս անձնակազմով (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

2017 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին Կենտրոնական պահպանության բաժնի կողմից պահպանվող օբյեկտներ

| Պետական պահպանության ենթակա օբյեկտի անվանումը | Աշխատողներ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | պայմանագրով սահմանված | | | փաստացի | | |
| | միջին խումբի ոստիկան | կրտսեր խումբի ոստիկան | հրաձիգ | միջին խումբի ոստիկան | կրտսեր խումբի ոստիկան | հրաձիգ |
| ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի շենքեր | - | 12.41 | - | - | 9.81 | - |
| Իրանի Իսլամական Հանրապետության մզկիթ | 2.00 | 9.60 | - | 2.00 | 8.00 | - |
| «Հ. Շարամբեյանի անվան ժողստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ | - | 4.80 | - | - | 3.00 | - |
| Մարտիրոս Սարյանի տուն թանգարան | - | 1.81 | - | - | 1.81 | - |
| «Հ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ | - | - | 5.49 | - | - | 3.00 |
| «Ա. Իսահակյանի տուն թանգարան» ՊՈԱԿ | - | - | 3.65 | - | - | 3.00 |
| Ջրային տնտեսության պետական կոմիտեի շենք | - | 9.60 | - | - | 6.00 | - |
| Կ. Դեմիրճյանի տուն | - | 4.8 | - | - | 3.00 | - |
| Հաղթանակի կամուրջ | 1.00 | 9.60 | - | 1.00 | 6.00 | - |
| Ընդամենը | 3.00 | 52.62 | 9.14 | 3.00 | 37.62 | 6.00 |

2017 թվականին, հաշվի առնելով թափուր հաստիքները, բյուջետային հաստիք զբաղեցնող 13 կրտսեր խմբի ոստիկաններ և 3 հրաձիգներ պետական բյուջեի միջոցների հաշվին պետական պահպանության ենթակա օբյեկտների պահպանություն իրականացնելու փոխարեն ներգրավվել են տնտեսավարողների հետ արտաբյուջեի շրջանակում կնքված պայմանագրերով պահպանվող օբյեկտների վերակարգերում, սակայն, ըստ աշխատավարձի հաշվարկման տեղեկագրերի՝ վարձատրվել են պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին: Վերլուծությունը ցույց է տվել, որ բյուջետային հաստիք զբաղեցնող, սակայն փաստացի արտաբյուջեի շրջանակում օբյեկտների պահպանություն իրականացնող Կենտրոնական պահպանության բաժնի այդ 16 աշխատողների համար ՀՀ կառավարության 22.01.2015թ. թիվ 25-Ն որոշմամբ հաստատված նորմատիվներին համապատասխան հաշվարկով 2017 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին ծախսը կազմում է 34,219.8 հազ. դրամ:

Զննումը ցույց է տվել, որ 2017 և 2018 թվականներին Կենտրոնական պահպանության բաժնի կողմից պետական բյուջեի միջոցների հաշվին պահպանվող օբյեկտը՝ «Հ.Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ-ը (ք. Երևան, Աբովյան 64), ներառված չէ

ՀՀ կառավարության 29.04.2004թ. թիվ 1008-Ն որոշմամբ հաստատված պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների ցանկում: Փաստորեն, Կենտրոնական պահպանության բաժինը առանց հիմնավորման 2017 և 2018 թվականներին պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացրել է այդ օբյեկտի պետական պահպանությունը կրտսեր խմբի երեք ոստիկաններով, որոնց համար պետական բյուջեից ծախսը ըստ նորմատիվի գումարային կազմում է 14,162.4 հազ. դրամ: Հաշվեքննության ընթացքում կազմված արձանագրության վերաբերյալ Կենտրոնական պահպանության բաժնի կողմից ներկայացված տեղեկանքի համաձայն՝ այդ օբյեկտի պահպանությունը իրականացվում է սկսած 1991 թվականից, և փաստացի՝ ՀՀ կառավարության 29.04.2004թ. թիվ 1008-Ն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո շուրջ 15 տարի իրականացվում է պետական պահպանության ենթակա շենքերի ու շինությունների ցանկում չընդգրկված օբյեկտի պահպանություն, որի համար պետական բյուջեից ծախսվել է ավելի քան 100,000.0 հազ. դրամ:

Կենտրոնական պահպանության բաժնի և տնտեսավարողների միջև կայուն պահակետերով պահպանության համար կնքված պայմանագրերի զննումը ցույց է տվել, որ 2018 թվականին երկու դեպքերում ծառայությունների մատուցման պայմանագրերը կնքվել են ՀՀ կառավարության 22.01.2015թ. թիվ 25-Ն որոշմամբ ոստիկանների և հրաձիգների համար սահմանված ծախսերի նորմատիվներից պակաս գնով: Արձանագրվել է, որ «Ապսիդա» ՍՊԸ և «Սիրո Մեղեդի» ՍՊԸ հետ 2018 թվականի մայիսի 1-ից կնքված պայմանագրերով, յուրաքանչյուրը կրտսեր խմբի երկու ոստիկաններով պահակետի համար, ծառայության մատուցման ամսական գինը սահմանվել է 300.0 հազ. դրամ այն դեպքում, երբ մեկ կրտսեր խմբի ոստիկանի ամսական ծախսի նորմատիվը սահմանված է 196.7 հազ. դրամ: Փաստորեն, ըստ նորմատիվի երկու ոստիկանների ծախսը կազմում է 393.4 հազ. դրամ, կամ պայմանագրերը կնքվել են ամսական նվազագույնից 93.4 հազ. դրամ պակաս գնով: Հետևաբար, 2018 թվականի ութ ամիսների համար յուրաքանչյուր պայմանագիրը կնքվել է նվազագույն գնից 747.2 հազ. դրամ պակաս, կամ երկու պայմանագրերը՝ 1,494.4 հազ. դրամ պակաս: Հաշվի առնելով, որ տնտեսավարողների հետ ծախսի նորմատիվներից պակաս գնով պայմանագրեր կնքելը առաջացնում է ծառայության մատուցման, բյուջետային և արտաբյուջետային միջոցների

օգտագործման, ֆինանսական հոսքերի կառավարման և հաշվառման ռիսկեր, անհրաժեշտ է վերանայել պակաս գնով կնքված պայմանագրերը և ձեռնարկել միջոցներ նման դեպքերը հետագայում բացառելու համար:

Զննումը ցույց է տվել նաև, որ 2017 և 2018 թվականներին կնքված պայմանագրերով առանձին դեպքերում պայմանագրային գումարը տնտեսավարողների կողմից վճարվել է պակաս, սակայն Կենտրոնական պահպանության բաժնի կողմից դեբիտորական պարտք չի հաշվարկվել: Արձանագրվել է.

- «Հայ-Ամերիկյան Առողջության Կենտրոն» հիմնադրամի հետ կնքված պայմանագրով ամսական գինը սահմանվել է 50.0 հազ. դրամ, սակայն յուրաքանչյուր ամիս վճարվել է 40.0 հազ. դրամ, կամ 2017 և 2018 թվականների համար տնտեսավարողի կողմից ենթակա է վերականգնման 240.0 հազ. դրամ:
- «Կոնսէլ» ՍՊԸ հետ կնքված պայմանագրով սահմանված 30.0 հազ. դրամի փոխարեն ամսական վճարվել է 20.0 հազ. դրամ, կամ 2017 և 2018 թվականների համար տնտեսավարողի կողմից ենթակա է վերականգնման 240.0 հազ. դրամ:
- «Այդիա ԷՍ» ՍՊԸ հետ կնքված պայմանագրով (լուծվել է 2018 թվականի նոյեմբերի 1-ին) սահմանված 70.0 հազ. դրամի փոխարեն ամսական վճարվել է 65.0 հազ. դրամ, կամ 2017 և 2018 թվականների համար տնտեսավարողի կողմից ենթակա է վերականգնման 110.0 հազ. դրամ:
- Ֆիզիկական անձի հետ կնքված պայմանագրով սահմանված 5.0 հազ. դրամի փոխարեն ամսական վճարվել է 3.0 հազ. դրամ, կամ 2017 և 2018 թվականների համար տնտեսավարողի կողմից ենթակա է վերականգնման 48.0 հազ. դրամ:

Տնտեսավարողների կողմից պայմանագրերով սահմանվածից պակաս վճարված գումարը կազմել է 638.0 հազ. դրամ, որը հաշվեքննության ընթացքում ամբողջությամբ վերականգնվել է Կենտրոնական պահպանության բաժնի արտաբյուջետային հաշվին:

Տնտեսավարողների հետ կնքված պայմանագրերով Կենտրոնական պահպանության բաժնի դեբիտորական պարտքը 2017 թվականի հունվարի 1-ին կազմել է 16,644.8 հազ. դրամ, իսկ 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքը ավելացել և կազմել է 20,308.5 հազ. դրամ, որը ենթակա է վճարման պայմանագրի կողմ հանդիսացող տնտեսավարողների կողմից: Ընդ որում, զննումը ցույց է տվել, որ դեբիտորական պարտքի շուրջ կեսը բաժին է հասնում

500.0 հազ. դրամ և ավելի պարտք ունեցող ութ տնտեսավարողների (աղյուսակ 3)

Աղյուսակ 3

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կենտրոնական պահպանության բաժնի կողմից մատուցված ծառայությունների դիմաց տնտեսավարողների 500.0 հազ. դրամը գերազանցող պարտքերը

հազ. դրամ

| | |
|---|---|
| Հայաստանի խուլերի միավորում | 2,750.0 |
| Նորք-Մարաշ բժշկական կենտրոն | 1,100.0 |
| «Վենուս Էլ» ՍՊԸ | 500.0 |
| «Տաշիր ինվեստ Գրուպ» ՓԲԸ | 1,000.0 |
| Ա/Ձ Մելինե Հակոբյան | 600.0 |
| «Էլդորադո-Արմեն» ՍՊԸ | 1,650.0 |
| «Անաիդա և Քրիստինե» ՍՊԸ | 580.0 |
| «Մամա Միա» ՍՊԸ | 990.0 |
| Ընդամենը | 9,170.0 |

Արտաբյուջետային միջոցների ծախսերի զննման ընթացքում համադրվել են աշխատավարձի հաշվարկման տեղեկագրերը, վերակարգերի մատյանները և ծառայության գրաֆիկները: Պարզվել է, որ ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության պետի հրամաններով 2017 թվականի փետրվարից մինչև 2018 թվականի հունիս ամիսը Սևանի պահպանության բաժանմունք են գործուղվել Կենտրոնական պահպանության բաժնի արտաբյուջետային հաստիք զբաղեցնող հինգ կրտսեր խմբի ոստիկաններ: Զննումը ցույց է տվել, որ այդ ոստիկանները գործուղման ժամանակաշրջանում չեն ընդգրկվել Սևանի պահպանության բաժանմունքի կողմից պահպանվող օբյեկտների վերակարգերում: Հետևաբար, չի հիմնավորվում գործուղման ժամանակաշրջանի համար այդ ոստիկաններին (առանց հաշվարկված հարկերի և վճարների) վճարված գումարային 9,513.7 հազ. դրամ աշխատավարձը:

Պարզվել է նաև, որ արտաբյուջետային հաստիք զբաղեցնող կրտսեր խմբի մեկ ոստիկանը 2017 թվականի հուլիսից մինչև 2018 թվականի ապրիլ ամսին աշխատանքից ազատվելը, ըստ ծառայության գրաֆիկների և վերակարգերի մատյանների, չի ընդգրկվել օբյեկտների պահպանության վերակարգերում, սակայն յուրաքանչյուր ամիս ստացել է աշխատավարձ: Չի հիմնավորվում այդ ոստիկանին (առանց հաշվարկված հարկերի և վճարների) վճարված 1,032.2 հազ. դրամ աշխատավարձը:

**ՊՊԳ վարչության Էրեբունու պահպանության բաժնի վերաբերյալ**

ՊՊԳ վարչության Էրեբունու պահպանության բաժնի (այսուհետ՝ Էրեբունու պահպանության բաժին) վերակարգերի մատյանների զննումը ցույց է տվել, որ 2017 և 2018 թվականներին չորս պայմանագրերով պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների պահպանությունը իրականացվել է սահմանվածից կրտսեր խմբի ոստիկանի՝ 17.40 միավոր պակաս անձնակազմով (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

2017 և 2018 թվականներին պետական բյուջեի միջոցների հաշվին Էրեբունու պահպանության բաժնի կողմից պահպանվող օբյեկտներ

| Պետական պահպանության ենթակա օբյեկտի անվանումը | Ոստիկաններ | | | |
|---|---|---|---|---|
| | պայմանագրով նախատեսված | | փաստացի | |
| | միջին խումբ | կրտսեր խումբ | միջին խումբ | կրտսեր խումբ |
| Էրեբունի, Նուբարաշեն վարչական շրջանների դատախազություն | - | 4.80 | - | 3.00 |
| ՀՀ գլխավոր դատախազության պատիժների իրականացման վրա հսկողություն իրականացնող վարչության շենք | - | 4.80 | - | 3.00 |
| «Էրեբունի» թանգարան | 1.00 | 9.60 | 1.00 | 6.00 |
| Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոց | 1.00 | 19.20 | 1.00 | 9.00 |
| Ընդամենը | 2.00 | 38.40 | 2.00 | 21.00 |

Վերակարգերի մատյանների համաձայն՝ 2017 և 2018 թվականներին բյուջետային հաստիք զբաղեցնող 17 կրտսեր խմբի ոստիկաններ պետական բյուջեի միջոցների հաշվին պետական պահպանության ենթակա օբյեկտների պահպանություն իրականացնելու փոխարեն ներգրավվել են տնտեսավարողների հետ արտաբյուջեի շրջանակում կնքված պայմանագրերով պահպանվող օբյեկտների վերակարգերում, սակայն, ըստ աշխատավարձի հաշվարկման տեղեկագրերի՝ վարձատրվել են պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին: Վերլուծությունը ցույց է տվել, որ բյուջետային հաստիք զբաղեցնող, սակայն փաստացի արտաբյուջեի շրջանակում օբյեկտների պահպանություն իրականացնող Էրեբունու պահպանության բաժնի այդ 17 ոստիկանների համար ՀՀ կառավարության 22.01.2015թ. թիվ 25-Ն որոշմամբ հաստատված

նորմատիվին համապատասխան հաշվարկով յուրաքանչյուր տարի պետական բյուջեի միջոցների հաշվին ծախսը կազմում է 40,126.8 հազ. դրամ, կամ 2017 և 2018 թվականներին՝ 80,253.6 հազ. դրամ:

Էրեբունու պահպանության բաժնի կողմից մատուցված ծառայությունների զննման ընթացքում արձանագրվել է, որ տնտեսավարողների հետ կնքված կենտրոնացված պահպանության դրտակետերի 34 պայմանագրերով օբյեկտների պահպանությունը բաժնի պետի հրամաններով 2017 թվականի փետրվար և մարտ ամիսներին ժամանակավորապես դադարեցվել է, իսկ 2018 թվականի մայիսի 1-ից մինչև 12-ը ընկած ժամանակահատվածում բաժնի պետի հրամաններով այդ օբյեկտները նորից դրվել են պահպանության: Զննումը ցույց է տվել, որ Էրեբունու պահպանության բաժնում բացակայում են տնտեսավարողների կողմից պահպանությունը դադարեցնելու և հետագայում նորից վերսկսելու վերաբերյալ դիմումները: Բացի այդ, Էրեբունու պահպանության բաժինը գրություններով չի տեղեկացրել ՊՊԳ վարչությանը այդ օբյեկտների պահպանությունը դադարեցնելու մասին և դրանք փաստացի նշված ժամանակահատվածում գտնվել են պահպանության տակ: Փաստորեն, 2017 և 2018 թվականներին այդ 34 տնտեսավարող սուբյեկտներին պահպանության ծառայությունը մատուցվել է ամբողջությամբ, սակայն դրա դիմաց բաժնի արտաբյուջետային հաշվին մուտք է եղել գումարային 14,947.5 հազ. դրամ պակաս: Հաշվեքննության ընթացքում Էրեբունու պահպանության բաժնի արտաբյուջետային հաշվին վերականգնվել է 14,000.0 հազ. դրամ, և 947.5 հազ. դրամ ձևակերպվել է որպես դեբիտորական պարտք:

Տնտեսավարողների հետ կնքված պայմանագրերով Էրեբունու պահպանության բաժնի դեբիտորական պարտքը 2017 թվականի հունվարի 1-ին կազմել է 2,406.6 հազ. դրամ, իսկ 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 8,723.7 հազ. դրամ, որը ենթակա է վճարման պայմանագրի կողմ հանդիսացող տնտեսավարողների կողմից: Ընդ որում, զննումը ցույց է տվել, որ դեբիտորական պարտքի ավելի քան 40%-ը բաժին է հասնում 200.0 հազ. դրամ և ավելի պարտք ունեցող վեց տնտեսավարողների (աղյուսակ 5):

Աղյուսակ 5

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Էրեբունու պահպանության բաժնի կողմից մատուցված ծառայությունների դիմաց տնտեսավարողների 200.0 հազ. դրամը գերազանցող պարտքերը

հազ. դրամ

| | |
|---|---|
| Այ-Ջի-Օու-Ար Թրեյդինգ Կորպոր | 560.0 |

| | |
|---|---|
| «Գինափ» ՍՊԸ | 700.0 |
| «Գոլդ ընդ ԳԲ» ՍՊԸ | 200.0 |
| [redacted]ի առանձնատուն* | 1,600.0 |
| «Յունիքիմ» ՍՊԸ | 350.0 |
| «Կրեդիտ Գոլդ» ՍՊԸ | 200.0 |
| Ընդամենը | 3,610.0 |

**ՊՊԳ վարչության Մալաթիայի պահպանության բաժնի վերաբերյալ**

ՊՊԳ վարչության Մալաթիայի պահպանության բաժնի (այսուհետ՝ Մալաթիայի պահպանության բաժին) վերակարգերի մատյանների զննումը ցույց է տվել, որ 2017 թվականին հինգ պայմանագրերով պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների պահպանությունը իրականացվել է սահմանվածից կրտսեր խմբի ոստիկանի՝ 17.05 միավոր պակաս անձնակազմով (աղյուսակ 6):

*Առկա են անձնական տվյալներ՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված:

Աղյուսակ 6

2017 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին Մալաթիայի պահպանության բաժնի կողմից պահպանվող օբյեկտներ

| Պետական պահպանության ենթակա օբյեկտի անվանումը | Ոստիկաններ | | | |
|---|---|---|---|---|
| | պայմանագրով սահմանված | | փաստացի | |
| | միջին խումբ | կրտսեր խումբ | միջին խումբ | կրտսեր խումբ |
| Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն | 1.00 | 4.80 | 1.00 | 3.00 |
| ՀՀ կառավարության պահեստային տնտեսություն | - | 8.45 | - | 6.00 |
| ՀՀ կառավարության ավտոտնտեսություն | - | 9.60 | - | 6.00 |
| Հայոց ցեղասպանության թանգարան, Մեծ եղեռնի հուշահամալիրի շինություններ | 1.00 | 15.40 | 1.00 | 7.00 |
| ՀՀ մետաղափործական վերահսկողության տեսչության շենք | - | 4.80 | - | 3.00 |
| Ընդամենը | 2.00 | 42.05 | 2.00 | 25.00 |

Վերակարգերի մատյանների համաձայն՝ 2017 թվականին բյուջետային հաստիք զբաղեցնող 17 կրտսեր խմբի ոստիկաններ պետական բյուջեի միջոցների հաշվին պետական պահպանության ենթակա օբյեկտների պահպանություն իրականացնելու փոխարեն ներգրավվել են տնտեսավարողների

հետ արտաբյուջեի շրջանակում կնքված պայմանագրերով պահպանվող օբյեկտների վերակարգերում, սակայն, ըստ աշխատավարձի հաշվարկման տեղեկագրերի՝ վարձատրվել են պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին: Վերլուծությունը ցույց է տվել, որ բյուջետային հաստիք զբաղեցնող, սակայն փաստացի արտաբյուջեի շրջանակում օբյեկտների պահպանություն իրականացնող Մալաթիայի պահպանության բաժնի այդ 17 ոստիկանների համար ՀՀ կառավարության 22.01.2015թ. թիվ 25-Ն որոշմամբ հաստատված նորմատիվին համապատասխան հաշվարկով 2017 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին ծախսը կազմում է 40,126.8 հազ. դրամ:

2018 թվականի առաջին հինգ ամիսներին Մալաթիայի պահպանության բաժնի կողմից բյուջետային միջոցների հաշվին պետական պահպանության ենթակա էին 6 օբյեկտներ, որոնց պահպանությունը իրականացրել են 2 միջին խմբի և 29 կրտսեր խմբի ոստիկաններ, իսկ մնացած 19 կրտսեր խմբի ոստիկանները իրականացրել են տնտեսավարողների հետ կնքված պայմանագրերով արտաբյուջեի շրջանակում օբյեկտների պահպանություն, սակայն ևս վարձատրվել են պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին: Վերլուծությունը ցույց է տվել, որ այդ 19 ոստիկանների համար 2018 թվականի առաջին հինգ ամիսներին պետական բյուջեի միջոցների հաշվին նորմատիվին համապատասխան հաշվարկով ծախսը կազմում է 18,686.5 հազ. դրամ:

Ընդհանուր առմամբ, 2017 և 2018 թվականներին Մալաթիայի պահպանության բաժինը բյուջետային հաստիքներ զբաղեցնող աշխատողների միջոցով իրականացրել է արտաբյուջեի շրջանակում տնտեսավարողների օբյեկտների պահպանություն, որի համար նորմատիվին համապատասխան հաշվարկով պետական բյուջեի միջոցների հաշվին ծախսը կազմում է 58,813.3 հազ. դրամ:

Մալաթիայի պահպանության բաժնի և տնտեսավարողների միջև կնքված պայմանագրերի զննումը ցույց է տվել, որ 2017 և 2018 թվականներին առանձին դեպքերում ծառայությունների մատուցման պայմանագրերը կնքվել են ՀՀ կառավարության 22.01.2015թ. թիվ 25-Ն որոշմամբ ոստիկանների և հրաձիգների համար սահմանված ծախսերի նորմատիվներից պակաս գնով.

- «Հաջողության ուղի» ՍՊԸ հետ 3 հրաձիգով մեկ պահակետի համար 2018 թվականի հուլիսի 1-ից կնքված պայմանագրով ծառայության մատուցման

ամսական գինը սահմանվել է 200.0 հազ. դրամ այն դեպքում, երբ մեկ հրաձգի ամսական ծախսի նորմատիվը սահմանված է 98.2 հազ. դրամ: Փաստորեն, երեք հրաձգի ամսական ծախսը կազմում է 294.6 հազ. դրամ, կամ պայմանագիրը կնքվել է նվազագույնից 94.6 հազ. դրամ պակաս գնով: Հետևաբար, 2018 թվականի վեց ամիսների համար պայմանագիրը կնքվել է նվազագույն գնից 567.6 հազ. դրամ պակաս:

- «Ալեքս Հոլդինգ» ՍՊԸ (տեքստիլի գործարան) հետ 3 հրաձգով մեկ պահակետի համար 2017 թվականի ապրիլից մինչև սեպտեմբեր ամիսը գործող պայմանագրով ծառայության մատուցման ամսական գինը 294.6 հազ. դրամի փոխարեն սահմանվել է 250.0 հազ. դրամ, կամ պայմանագիրը կնքվել է նվազագույնից 44.6 հազ. դրամ պակաս գնով: Հետևաբար, 2017 թվականի հինգ ամիսների համար պայմանագիրը կնքվել է նվազագույն գնից 223.0 հազ. դրամ պակաս:

Արտաբյուջետային միջոցների ծախսերի զննման ընթացքում համադրվել են աշխատավարձի հաշվարկման տեղեկագրերը, վերակարգերի մատյանները և ծառայության գրաֆիկները: Պարզվել է, որ «Ալեքս Հոլդինգ» ՍՊԸ (կենտրոնական գրասենյակ) հետ 3 հրաձգով մեկ պահակետի համար 2017 թվականի օգոստոսից մինչև 2018 թվականի մարտ ամիսը գործող պայմանագրի շրջանակում՝ ըստ վերակարգերի մատյանների, հինգ ամիս պահպանությունը իրականացվել է 6 հրաձգի կողմից, որի համար այդ հինգ ամիսներին նորմատիվով սահմանվածից ավելի է ծախսվել 1,473.0 հազ. դրամ:

Բացի այդ, «Ալեքս Հոլդինգ» ՍՊԸ (տեքստիլի գործարան) հետ կնքված պայմանագրով 2017 թվականի փետրվար և մարտ ամիսներին սահմանված էր պահպանության իրականացում 7 հրաձգի կողմից, սակայն փաստացի պահպանությունը իրականացվել է 13 հրաձգի կողմից, որի համար այդ երկու ամիսներին նորմատիվով սահմանվածից ավելի է ծախսվել 1,178.4 հազ. դրամ:

Հաշվի առնելով, որ տնտեսավարողների հետ ծախսի նորմատիվներից պակաս գնով պայմանագրեր կնքելը, կամ հավելյալ անձնակազմով պահպանություն իրականացնելը առաջացնում է ծառայության մատուցման, բյուջետային և արտաբյուջետային միջոցների օգտագործման, ֆինանսական հոսքերի կառավարման և հաշվառման ռիսկեր, անհրաժեշտ է վերանայել պակաս գնով կնքված պայմանագրերը և ձեռնարկել միջոցներ նման դեպքերը հետագայում բացառելու համար:

Տնտեսավարողների հետ կնքված պայմանագրերով Մալաթիայի պահպանության բաժնի դեբիտորական պարտքը 2017 թվականի հունվարի 1-ին կազմել է 5,562.8 հազ. դրամ, իսկ 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 17,412.5 հազ. դրամ, որը ենթակա է վճարման պայմանագրի կողմ հանդիսացող տնտեսավարողների կողմից: Ընդ որում, զննումը ցույց է տվել, որ դեբիտորական պարտքի շուրջ կեսը բաժին է հասնում 300.0 հազ. դրամ և ավելի պարտք ունեցող 10 տնտեսավարողների (աղյուսակ 7):

Աղյուսակ 7

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Մալաթիայի պահպանության բաժնի կողմից մատուցված ծառայությունների դիմաց տնտեսավարողների 300.0 հազ. դրամը գերազանցող պարտքերը

հազ. դրամ

| | |
|---|---|
| «Արդշինբանկ» ՓԲԸ Մալաթիա մ/ճ | 450.0 |
| «Վեոն Արմենիա» ՓԲԸ | 796.4 |
| «Նատալի Ֆարմ» ՍՊԸ | 1,540.0 |
| [redacted]ի շին. հրապարակ* | 400.0 |
| «Ավեմադ» ՍՊԸ | 323.0 |
| «Փաթիլա» ՍՊԸ | 600.0 |
| «Լ.Ա. Պլաստ» ՍՊԸ և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ | 300.0 |
| «Ալկո իմպորտ էքսպորտ» ՍՊԸ | 1,200.0 |
| «Բաղալյան եղբայրներ» ՍՊԸ «Կովկաս» համալիր | 900.0 |
| [redacted]ի առանձնատուն* | 1,700.0 |
| Ընդամենը | 8,209.4 |

ՊՊԳ վարչության պետի հրամաններով 2017 թվականի փետրվարից մինչև 2018 թվականի մայիս ամիսը Սևանի պահպանության բաժանմունք է գործուղվել Մալաթիայի պահպանության բաժնի մեկ կրտսեր խմբի ոստիկան: Պարզվել է, որ այդ ոստիկանը գործուղման ժամանակաշրջանում չի ընդգրկվել Սևանի պահպանության բաժանմունքի կողմից պահպանվող օբյեկտների վերակարգերում: Հետևաբար, չի հիմնավորվում գործուղման ժամանակաշրջանի համար այդ ոստիկանին (առանց հաշվարկված հարկերի և վճարների) վճարված 1,942.1 հազ. դրամ աշխատավարձը:

*Առկա են անձնական տվյալներ՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված:

## ՊՊԳ վարչության Կոտայքի պահպանության բաժնի վերաբերյալ

ՊՊԳ վարչության Կոտայքի պահպանության բաժնի (այսուհետ՝ Կոտայքի պահպանության բաժին) վերակարգերի մատյանների զննումը ցույց է տվել, որ 2017 և 2018 թվականներին երեք պայմանագրերով պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների պահպանությունը իրականացվել է սահմանվածից կրտսեր խմբի ոստիկանի՝ 2.09 միավոր պակաս անձնակազմով (աղյուսակ 8):

Աղյուսակ 8

2017 և 2018 թվականներին պետական բյուջեի միջոցների հաշվին Կոտայքի պահպանության բաժնի կողմից պահպանվող օբյեկտներ

| Պետական պահպանության ենթակա օբյեկտի անվանումը | Աշխատողներ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | պայմանագրով սահմանված | | | փաստացի | | |
| | միջին խումբ | կրտսեր խումբ | հրաձիգ | միջին խումբ | կրտսեր խումբ | հրաձիգ |
| Սևաբերդի ջրամբար | 1.00 | 9.60 | - | 1.00 | 10.00 | - |
| ՀՀ քննչական կոմիտեի շենք (ք. Աբովյան) | - | 5.49 | - | - | 3.00 | - |
| «Հայ և Ռուս ժողովուրդների բարեկամության թանգարան» ՊՈԱԿ | - | - | 3.65 | - | - | 4.00 |
| Ընդամենը | 1.00 | 15.09 | 3.65 | 1.00 | 13.00 | 4.00 |

Վերակարգերի մատյանների համաձայն՝ 2017 և 2018 թվականներին բյուջետային հաստիք զբաղեցնող մեկ կրտսեր խմբի ոստիկան (ևս մեկ հաստիք մշտապես թափուր էր) պետական բյուջեի միջոցների հաշվին պետական պահպանության ենթակա օբյեկտների պահպանություն իրականացնելու փոխարեն ներգրավվել էր տնտեսավարողների հետ արտաբյուջեի շրջանակում կնքված պայմանագրերով պահպանվող օբյեկտների վերակարգերում, սակայն, ըստ աշխատավարձի հաշվարկման տեղեկագրերի՝ վարձատրվել է պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին: Վերլուծությունը ցույց է տվել, որ բյուջետային հաստիք զբաղեցնող, սակայն փաստացի արտաբյուջեի շրջանակում օբյեկտների պահպանություն իրականացնող Կոտայքի պահպանության բաժնի մեկ ոստիկանի համար ՀՀ կառավարության 22.01.2015թ. թիվ 25-Ն որոշմամբ հաստատված նորմատիվին համապատասխան հաշվարկով 2017 և 2018 թվականներին պետական բյուջեի միջոցների հաշվին ծախսը կազմում է 4,720.8 հազ. դրամ:

Կոտայքի պահպանության բաժնի և տնտեսավարողների միջև կնքված պայմանագրերի զննումը ցույց է տվել, որ 2017 և 2018 թվականներին առանձին դեպքերում ծառայությունների մատուցման պայմանագրերը կնքվել են ՀՀ կառավարության 22.01.2015թ. թիվ 25-Ն որոշմամբ ոստիկանների և հրաձիգների համար սահմանված ծախսերի նորմատիվներից պակաս գնով.

- «Արմօյլ» ՍՊԸ հետ կրտսեր խմբի 3 ոստիկանով և 6 հրաձիգներով երեք պահակետի համար 2018 թվականի ապրիլի 1-ից կնքված պայմանագրով ծառայության մատուցման ամսական գինը սահմանվել է 900.0 հազ. դրամ այն դեպքում, երբ մեկ կրտսեր խմբի ոստիկանի ամսական ծախսի նորմատիվը սահմանված է 196.7 հազ. դրամ, իսկ մեկ հրաձգինը՝ 98.2 հազ. դրամ: Ըստ ծախսերի նորմատիվների, երեք ոստիկանի և վեց հրաձգի ամսական ծախսը կազմում է 1,179.3 հազ. դրամ, կամ պայմանագիրը կնքվել է նվազագույնից 279.3 հազ. դրամ պակաս գնով: Հետևաբար, 2018 թվականի ինը ամիսների համար պայմանագիրը կնքվել է նվազագույն գնից 2,513.7 հազ. դրամ պակաս:
- «Շահնազարյան» ՓԲԸ հետ երեք ոստիկանով մեկ պահակետի համար 2014 թվականի ապրիլի 1-ից կնքված պայմանագրով ծառայության մատուցման ամսական գինը 590.1 հազ. դրամի փոխարեն սահմանվել է 550.0 հազ. դրամ, կամ պայմանագիրը կնքվել է նվազագույնից 40.1 հազ. դրամ պակաս գնով: Հետևաբար, 2017 և 2018 թվականների համար պայմանագիրը կնքվել է նվազագույն գնից 962.4 հազ. դրամ պակաս:
- «Ավամ Գրուպ» ՍՊԸ հետ երկու հրաձգով մեկ պահակետի համար 2018 թվականի հուլիսի 1-ից կնքված պայմանագրով ծառայության մատուցման ամսական գինը 196.4 հազ. դրամի փոխարեն սահմանվել է 150.0 հազ. դրամ, կամ պայմանագիրը կնքվել է նվազագույնից 46.4 հազ. դրամ պակաս գնով: Հետևաբար, 2018 թվականի վեց ամիսների համար պայմանագիրը կնքվել է նվազագույն գնից 278.4 հազ. դրամ պակաս:
- « Քեյ Էնդ Ջի գրուպ» ՍՊԸ հետ երկու հրաձգով մեկ պահակետի համար 2018 թվականի հուլիսի 1-ից կնքված պայմանագրով ծառայության մատուցման ամսական գինը 196.4 հազ. դրամի փոխարեն սահմանվել է 160.0 հազ. դրամ, կամ պայմանագիրը կնքվել է նվազագույնից 36.4 հազ. դրամ պակաս գնով: Հետևաբար, 2018 թվականի վեց ամիսների համար պայմանագիրը կնքվել է նվազագույն գնից 218.4 հազ. դրամ պակաս:

Հաշվի առնելով, որ տնտեսավարողների հետ ծախսի նորմատիվներից պակաս գնով պայմանագրեր կնքելը առաջացնում է ծառայության մատուցման, բյուջետային և արտաբյուջետային միջոցների օգտագործման, ֆինանսական հոսքերի կառավարման և հաշվառման ռիսկեր, անհրաժեշտ է վերանայել պակաս գնով կնքված պայմանագրերը և ձեռնարկել միջոցներ նման դեպքերը հետագայում բացառելու համար:

Տնտեսավարողների հետ կնքված պայմանագրերով Կոտայքի պահպանության բաժնի դեբիտորական պարտքը 2017 թվականի հունվարի 1-ին կազմել է 6,079.0 հազ. դրամ, իսկ 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 21,243.3 հազ. դրամ, որը ենթակա է վճարման պայմանագրի կողմ հանդիսացող տնտեսավարողների կողմից: Ընդ որում, զննումը ցույց է տվել, որ դեբիտորական պարտքի 90%-ը բաժին է հասնում 500.0 հազ. դրամ և ավելի պարտք ունեցող 11 տնտեսավարողների (աղյուսակ 9):

Աղյուսակ 9

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կոտայքի պահպանության բաժնի կողմից մատուցված ծառայությունների դիմաց տնտեսավարողների 500.0 հազ. դրամը գերազանցող պարտքերը

հազ. դրամ

| | |
|---|---|
| Հրազդանի ՋԷԿ | 5,196.0 |
| «Արարատ Ցեմենտ» ՓԲԸ | 3,890.0 |
| «Օնիրա Քլաբ» ՍՊԸ | 1,875.0 |
| «Մուլտի Ավտոտրանս» ՍՊԸ | 900.0 |
| «Գլոբալ Մոթորս» ՓԲԸ | 1,035.0 |
| «Մագաս Ինվեստ» ՓԲԸ | 870.0 |
| «Օլիմպավան» ՍՊԸ | 900.0 |
| «Կոտայք գարեջրի գործարան» ՍՊԸ | 1,610.0 |
| «Մուլտի Գրուպ Սթուն» ՓԲԸ | 740.0 |
| «Գինու Կոնյակի տուն Շահնազարյան » ՍՊԸ | 550.0 |
| «Մուլտի Ակվամարին» ՍՊԸ | 1,875.0 |
| Ընդամենը | 19,441.0 |

**ՊՊԳ վարչության Հրազդանի պահպանության բաժնի վերաբերյալ**

ՊՊԳ վարչության Հրազդանի պահպանության բաժնի (այսուհետ՝ Հրազդանի պահպանության բաժին) վերակարգերի մատյանների զննումը ցույց է տվել, որ 2017 թվականին ութ պայմանագրերով պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների պահպանությունը իրականացվել է սահմանվածից կրտսեր խմբի

ոստիկանի՝ 8.29 միավոր և հրաձգի՝ 3.75 միավոր պակաս անձնակազմով (աղյուսակ 10):

Աղյուսակ 10

2017 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին Հրազդանի պահպանության բաժնի պահպանվող օբյեկտներ

| Պետական պահպանության ենթակա օբյեկտի անվանումը | Աշխատողներ | | | |
|---|---|---|---|---|
| | պայմանագրով սահմանված | | փաստացի | |
| | ոստիկան | հրաձիգ | ոստիկան | հրաձիգ |
| Կոտայքի մարզային դատախազություն | 4.80 | - | 3.00 | - |
| «Հրազդանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ | - | 3.65 | - | 3.00 |
| «Օրբելի եղբայրների տուն թանգարան» ՊՈԱԿ | - | 3.65 | - | 3.00 |
| «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղ | - | 3.65 | - | 3.00 |
| ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենք (ք. Հրազդան) | 5.49 | - | 3.00 | - |
| Կենտրոնական օրվա կարգավորող ջրամբար | 5.00 | - | 3.00 | - |
| Հարավային օրվա կարգավորող ջրամբար | 5.00 | - | 3.00 | - |
| «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի Կոտայքի մասնաճյուղ | - | 4.80 | - | 3.00 |
| Ընդամենը | 20.29 | 15.75 | 12.00 | 12.00 |

Վերակարգերի մատյանների համաձայն՝ 2017 թվականին բյուջետային հաստիք զբաղեցնող 8 կրտսեր խմբի ոստիկաններ և 4 հրաձիգներ պետական բյուջեի միջոցների հաշվին պետական պահպանության ենթակա օբյեկտների պահպանություն իրականացնելու փոխարեն ներգրավվել են տնտեսավարողների հետ արտաբյուջեի շրջանակում կնքված պայմանագրերով պահպանվող օբյեկտների վերակարգերում, սակայն, ըստ աշխատավարձի հաշվարկման տեղեկագրերի՝ վարձատրվել են պետական բյուջեի միջոցների հաշվին: Վերլուծությունը ցույց է տվել, որ բյուջետային հաստիք զբաղեցնող, սակայն փաստացի արտաբյուջեի շրջանակում օբյեկտների պահպանություն իրականացնող Հրազդանի պահպանության բաժնի այդ 12 աշխատողների համար ՀՀ կառավարության 22.01.2015թ. թիվ 25-Ն որոշմամբ հաստատված նորմատիվներին համապատասխան հաշվարկով 2017 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին ծախսը կազմում է 23,596.0 հազ. դրամ:

2018 թվականի առաջին եռամսյակում Հրազդանի պահպանության բաժնի կողմից բյուջետային միջոցների հաշվին պետական պահպանության ենթակա ինը օբյեկտների պահպանությունը իրականացվել է 15 կրտսեր խմբի ոստիկանի և 12 հրաձգի կողմից, իսկ մնացած 11 կրտսեր խմբի ոստիկանները և 4 հրաձիգները իրականացրել են տնտեսավարողների հետ կնքված

պայմանագրերով արտաբյուջեի շրջանակում օբյեկտների պահպանություն, սակայն ևս վարձատրվել են պետական բյուջեի միջոցների հաշվին: Վերլուծությունը ցույց է տվել, որ այդ 15 աշխատողների համար 2018 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջեի միջոցների հաշվին նորմատիվներին համապատասխան հաշվարկով ծախսը կազմում է 7,669.3 հազ. դրամ:

Ընդհանուր առմամբ, 2017 և 2018 թվականներին Հրազդանի պահպանության բաժինը բյուջետային հաստիքներ զբաղեցնող աշխատողների միջոցով իրականացրել է արտաբյուջեի շրջանակում տնտեսավարողների օբյեկտների պահպանություն, որի համար նորմատիվներին համապատասխան հաշվարկով պետական բյուջեի միջոցների հաշվին ծախսը կազմում է 31,265.3 հազ. դրամ:

Տնտեսավարողների հետ կնքված պայմանագրերով Հրազդանի պահպանության բաժնի դեբիտորական պարտքը 2017 թվականի հունվարի 1-ին կազմել է 1,566.5 հազ. դրամ, իսկ 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքը ավելացել և կազմել է 10,762.8 հազ. դրամ, որը ենթակա է վճարման պայմանագրի կողմ հանդիսացող տնտեսավարողների կողմից: Ընդ որում, զննումը ցույց է տվել, որ դեբիտորական պարտքի շուրջ 60%-ը բաժին է հասնում 500.0 հազ. դրամ և ավելի պարտք ունեցող 8 տնտեսավարողների (աղյուսակ 11):

Աղյուսակ 11

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հրազդանի պահպանության բաժնի կողմից մատուցված ծառայությունների դիմաց տնտեսավարողների 500.0 հազ. դրամը գերազանցող պարտքերը

հազ. դրամ

| | |
|---|---|
| Աղվերան ԻՆՔ | 700.0 |
| Հաստոցաշինական գործարան | 1,030.0 |
| Արման, Բանդուրյան, Աստղիկ Վարդանյան Ա/Ձ, Լունա բար | 570.3 |
| «Էկոշին գրուպ» ՍՊԸ | 640.0 |
| Թեղենիս ՈԱԿ | 1,149.4 |
| «Գրին ֆարմեր» ՍՊԸ | 1,440.0 |
| «Զուպ» ՍՊԸ, Միրաժ ակումբ | 662.1 |
| «Ակվայան» ՍՊԸ | 1,057.0 |
| Ընդամենը | 7,248.8 |

**ՊՊԳ վարչության Աշոցքի պահպանության բաժանմունքի վերաբերյալ**

ՊՊԳ վարչության Աշոցքի պահպանության բաժանմունքը (այսուհետ՝ Աշոցքի պահպանության բաժանմունք) 2017 թվականին երկու պայմանագրերով

պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների պահպանությունը իրականացրել է սահմանվածից կրտսեր խմբի ոստիկանի՝ 2.00 միավոր պակաս անձնակազմով (աղյուսակ 12):

Աղյուսակ 12

2017 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին Աշոցքի պահպանության բաժանմունքի կողմից պահպանվող օբյեկտներ

| Պետական պահպանության ենթակա օբյեկտի անվանումը | Ոստիկան | | | |
|---|---|---|---|---|
| | պայմանագրով սահմանված | | փաստացի | |
| | միջին խումբ | կրտսեր խումբ | միջին խումբ | կրտսեր խումբ |
| Արփա լճի ջրամբար | 1.00 | 9.60 | 1.00 | 7.60 |
| Թավշուտի ջրամբար | - | 9.60 | - | 9.60 |
| Ընդամենը | 1.00 | 19.20 | 1.00 | 17.20 |

2017 թվականին բյուջետային հաստիք զբաղեցնող 2 կրտսեր խմբի ոստիկաններ պետական բյուջեի միջոցների հաշվին պետական պահպանության ենթակա օբյեկտների պահպանություն իրականացնելու փոխարեն ներգրավվել են տնտեսավարողի հետ արտաբյուջեի շրջանակում կնքված պայմանագրով պահպանվող օբյեկտի (ՎՏԲ Արմենիա բանկի Աշոցքի մասնաճյուղ) վերակարգերում, սակայն, ըստ աշխատավարձի հաշվարկման տեղեկագրերի՝ վարձատրվել են պետական բյուջեի միջոցների հաշվին: Վերլուծությունը ցույց է տվել, որ բյուջետային հաստիք զբաղեցնող, սակայն փաստացի արտաբյուջեի շրջանակում օբյեկտի պահպանություն իրականացնող Աշոցքի պահպանության բաժանմունքի այդ 2 կրտսեր խմբի ոստիկանների համար ՀՀ կառավարության 22.01.2015թ. թիվ 25-Ն որոշմամբ հաստատված նորմատիվին համապատասխան հաշվարկով 2017 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին ծախսը կազմում է 4,720.8 հազ. դրամ:

2018 թվականի առաջին հինգ ամիսներին բյուջետային միջոցների հաշվին պետական պահպանության ենթակա երկու օբյեկտների պահպանությունը իրականացվել է միջին խմբի մեկ ոստիկանի և 17 կրտսեր խմբի ոստիկանների կողմից, իսկ մնացած 2 կրտսեր խմբի ոստիկանները իրականացրել են տնտեսավարողի հետ կնքված պայմանագրով արտաբյուջեի շրջանակում

օբյեկտի պահպանություն, սակայն ևս վարձատրվել են պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին: Վերլուծությունը ցույց է տվել, որ այդ երկու ոստիկանների համար 2018 թվականի հինգ ամիսներին պետական բյուջեի միջոցների հաշվին նորմատիվին համապատասխան հաշվարկով ծախսը կազմում է 1,967.0 հազ. դրամ:

Ընդհանուր առմամբ, 2017 և 2018 թվականներին Աշոցքի պահպանության բաժանմունքը բյուջետային հաստիքներ զբաղեցնող ոստիկանների միջոցով իրականացրել է արտաբյուջեի շրջանակում տնտեսավարողի օբյեկտի պահպանություն, որի համար նորմատիվին համապատասխան հաշվարկով պետական բյուջեի միջոցների հաշվին ծախսը կազմում է 6,687.8 հազ. դրամ:

Տնտեսավարողների հետ կնքված պայմանագրերով Աշոցքի պահպանության բաժանմունքը 2017 թվականի հունվարի 1-ին դեբիտորական պարտքեր չի ունեցել, իսկ 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ դեբիտորական պարտքը կազմել է 110.0 հազ. դրամ, որը ենթակա է վճարման պայմանագրի կողմ հանդիսացող վեց տնտեսավարողների կողմից:

## III. ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
## ՊՊԳ վարչության վերաբերյալ

ՀՀ ոստիկանության պետի 11.12.2015թ. թիվ 3045-Ա հրամանով հաստատվել է ՊՊԳ վարչության կանոնադրությունը, համաձայն որի՝ ՊՊԳ վարչությունը իր ենթակայության տակ գտնվող ստորաբաժանումների ուժերով պետական բյուջեի միջոցների հաշվին, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով կազմակերպում է ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական պահպանության ենթակա, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց պատկանող այլ օբյեկտների պահպանությունը, գույքի և անձի անվտանգության հետ կապված վճարովի ծառայությունների մատուցումը: 2017 և 2018 թվականներին ՊՊԳ վարչության կազմում գործել են 41 պահպանության ստորաբաժանումներ, այդ թվում՝ անձի անվտանգության և գույքի պահպանության բաժինը, ինչպես նաև՝ ավտոտնտեսություն:

Պետական պահպանության համար 2017 և 2018 թվականներին պետական բյուջեի «ՀՀ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանություն» ծրագրով ՊՊԳ վարչության

ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են համապատասխանաբար՝ 3,053,790.0 հազ. դրամ և 3,141,337.0 հազ. դրամ (աղյուսակ 13):

Աղյուսակ 13

2017 և 2018 թվականներին ՊՊԳ վարչությանը ֆինանսավորումը պետական բյուջեից

հազ. դրամ

| Հոդվածի անվանում | Հատկացված գումար | |
|---|---|---|
| | 2017 թվական | 2018 թվական |
| Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 2,915,256.8 | 3,019,612.2 |
| Կապի ծառայություններ | 402.1 | 399.8 |
| Ներքին գործուղումներ | - | 1,383.0 |
| Գրասենյակային նյութեր և հագուստ | 43,586.4 | 49,879.5 |
| Տրանսպորտային նյութեր | 32,468.8 | 31,811.4 |
| Այլ նպաստներ բյուջեից (արձակման նպաստ) | 62,075.8 | 38,251.1 |
| Ընդամենը | 3,053,789.9 | 3,141,337.0 |

2017 և 2018 թվականներին պետական բյուջեից հատկացված միջոցներից համապատասխանաբար՝ 95.5%-ը և 96.1%-ը կազմել են ՊՊԳ վարչության ենթակա ստորաբաժանումների բյուջետային հաստիքներ զբաղեցնող աշխատողների վարձատրության ծախսերը:

ՊՊԳ վարչության ենթակա ստորաբաժանումները իրականացրել են պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության գծով ծառայությունների մատուցում տնտեսավարողներին և ֆիզիկական անձանց: 2017 և 2018 թվականներին այդ ծառայությունների մատուցման դիմաց ՊՊԳ վարչության և ստորաբաժանումների թվով 42 արտաբյուջետային հաշիվներին մուտք է եղել համապատասխանաբար՝ 6,797,458.8 հազ. դրամ և 6,995,741.2 հազ. դրամ:

2017 և 2018 թվականներին ՊՊԳ վարչության արտաբյուջետային միջոցների ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 6,738,488.9 հազ. դրամ և 6,838,560.9 հազ. դրամ (աղյուսակ 14):

Աղյուսակ 14

2017 և 2018 թվականներին ՊՊԳ վարչության արտաբյուջետային միջոցների ծախսերը

հազ. դրամ

| Հոդվածի անվանում | Փաստացի ծախս | |
|---|---|---|
| | 2017 թվական | 2018 թվական |
| Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 5,846,866.5 | 6,191,431.4 |
| Էներգետիկ ծառայություններ | 33,002.7 | 25,490.8 |
| Կոմունալ ծառայություններ | 2,021.3 | 1,812.2 |

| | | |
|---|---|---|
| Կապի ծառայություններ | 127,573.1 | 145,498.0 |
| Ապահովագրական ծախսեր | 3,815.0 | 4,439.0 |
| Գույքի և սարքավորումների վարձակալություն | 1,872.0 | 1,440.0 |
| Ներքին գործուղումներ | 51,782.8 | 61,574.9 |
| Վարչական ծառայություններ | 328.0 | 328.0 |
| Համակարգչային ծառայություններ | 6,850.0 | - |
| Տեղեկատվական ծառայություն | 22,526.3 | 14,040.0 |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 170.0 | 3,960.0 |
| Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 1,128.9 | 5,648.0 |
| Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 18,058.0 | 21,078.6 |
| Գրասենյակային նյութեր և հագուստ | 149,006.8 | 71,756.4 |
| Տրանսպորտային նյութեր | 175,552.4 | 223,789.7 |
| Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 14,779.0 | 16,941.4 |
| Հատուկ նպատակային այլ նյութեր | 424.8 | 421.3 |
| Այլ ընթացիկ դրամաշնորհներ | 10,000.0 | 7,000.0 |
| Այլ նպաստներ բյուջեից | 27,402.2 | 31,929.2 |
| Պարտադիր վճարներ | 1,110.3 | 978.0 |
| Շենքերի և շինությունների ձեռք բերում | 25,000.0 | - |
| Շենքերի և շինությունների շինարարություն | 45,600.0 | - |
| Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 7,970.0 | 561.4 |
| Տրանսպորտային սարքավորումներ | 106,200.0 | - |
| Վարչական սարքավորումներ | 58,008.8 | 6,802.6 |
| Նախագծահետազոտական ծախսեր | 1,440.0 | 1,640.0 |
| Ընդամենը | 6,738,488.9 | 6,838,560.9 |

2017 և 2018 թվականներին արտաբյուջետային ծախսերի համապատասխանաբար՝ 86.8%-ը և 90.5%-ը ուղղվել է ՊՊԳ վարչության և ստորաբաժանումների արտաբյուջետային հաստիքներ զբաղեցնող աշխատողների վարձատրությանը:

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՊՊԳ վարչության և ենթակա ստորաբաժանումների արտաբյուջետային հաշիվների մնացորդը կազմել է գումարային 343,475.4 հազ. դրամ:

ՊՊԳ վարչության ֆինանսատնտեսական գործունեության ներքին աուդիտը իրականացվել է ՀՀ ոստիկանության ներքին աուդիտի վարչության կողմից, որի արդյունքում առանձին ստորաբաժանումներիում արձանագրվել են ֆինանսական խախտումներ և հարուցվել են քրեական գործեր:

Հաշվեքննության ընթացքում կազմվել են հաշվեքննության յոթ արձանագրություններ, որոնք ներկայացվել են ծանոթացման ՊՊԳ վարչության պետին և ստորաբաժանումների պետերին: Հաշվեքննության արձանագրությունների վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել, երեք ստորաբաժանում տեղեկանքով ներկայացրել են պարզաբանումներ:

**ՊՊԳ վարչության Կենտրոնական պահպանության բաժնի վերաբերյալ**

2017 և 2018 թվականներին Կենտրոնական պահպանության բաժինը պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացրել է ինը օբյեկտների պետական պահպանություն: Այդ նպատակով Կենտրոնական պահպանության բաժնին 2017 թվականին պետական բյուջեից հատկացումը կազմել է 133,754.3 հազ. դրամ, 2018 թվականին՝ 137,329.4 հազ. դրամ: 2017 թվականին օբյեկտների պետական պահպանության համար պայմանագրերով սահմանված հաստիքները գումարային կազմել են՝ միջին խմբի ոստիկաններ՝ 3.00 միավոր հաստիք, կրտսեր խմբի ոստիկաններ՝ 52.62 միավոր հաստիք և հրաձիգներ՝ 9.14 միավոր հաստիք: Տարվա ընթացքում բաժնի բոլոր բյուջետային հաստիքները, բացառությամբ երկու կրտսեր խմբի ոստիկանի հաստիքի, համալրված էին: 2018 թվականի ընթացքում թափուր էին կրտսեր խմբի ոստիկանի 2-ից մինչև 6 բյուջետային հաստիքներ:

2017 թվականին Կենտրոնական պահպանության բաժնի բյուջետային աշխատողներին վճարվել է 129,911.2 հազ. դրամ աշխատավարձ ու պարգևատրումներ, ինչպես նաև 3,834.1 հազ. դրամ արձակման նպաստ: 2018 թվականին վճարվել է 135,577.6 հազ. դրամ աշխատավարձ ու պարգևատրումներ, ինչպես նաև 1,751.8 հազ. դրամ արձակման նպաստ:

Տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի հիման վրա ծառայությունների մատուցման դիմաց 2017 և 2018 թվականներին Կենտրոնական պահպանության բաժնի արտաբյուջետային հաշվին մուտք է եղել համապատասխանաբար՝ 479,780.0 հազ. դրամ և 494,802.7 հազ. դրամ:

2017 և 2018 թվականներին Կենտրոնական պահպանության բաժնի արտաբյուջետային միջոցների ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 476,379.7 հազ. դրամ և 466,065.1 հազ. դրամ (հավելված 5):

2017 և 2018 թվականներին Կենտրոնական պահպանության բաժնի արտաբյուջետային ծախսերի համապատասխանաբար՝ 70.3%-ը և 76.7%-ը

կազմել են աշխատողների վարձատրության ծախսերը, 12.5%-ը և 13.6%-ը՝ մասհանումները ՊՊԳ վարչությանը:

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կենտրոնական պահպանության բաժնի արտաբյուջետային հաշվի մնացորդը կազմել է 38,699.4 հազ. դրամ:

**ՊՊԳ վարչության Էրեբունու պահպանության բաժնի վերաբերյալ**

2017 և 2018 թվականներին Էրեբունու պահպանության բաժինը պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացրել է չորս օբյեկտների պետական պահպանություն: Այդ նպատակով 2017 թվականին պետական բյուջեից Էրեբունու պահպանության բաժնին հատկացումը կազմել է 95,673.5 հազ. դրամ, 2018 թվականին՝ 104,461.0 հազ. դրամ: Օբյեկտների պետական պահպանության համար պայմանագրերով սահմանված հաստիքները գումարային կազմել են՝ միջին խմբի ոստիկաններ՝ 2.0 միավոր և կրտսեր խմբի ոստիկաններ՝ 38.40 միավոր հաստիք: Բաժնի բոլոր բյուջետային հաստիքները համալրված էին:

2017 թվականին Էրեբունու պահպանության բաժնի աշխատողներին վճարվել է 90,367.2 հազ. դրամ աշխատավարձ ու պարգևատրումներ, ինչպես նաև 5,306.3 հազ. դրամ արձակման նպաստ: 2018 թվականին վճարվել է 102,269.9 հազ. դրամ աշխատավարձ ու պարգևատրումներ, 2,047.1 հազ. դրամ արձակման նպաստ, ինչպես նաև կատարվել է 144.0 հազ. դրամի գործուղման ծախս:

Տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի հիման վրա ծառայությունների մատուցման դիմաց 2017 և 2018 թվականներին Էրեբունու պահպանության բաժնի արտաբյուջետային հաշվին մուտք է եղել համապատասխանաբար՝ 176,640.3 հազ. դրամ և 183,109.5 հազ. դրամ:

2017 և 2018 թվականներին Էրեբունու պահպանության բաժնի արտաբյուջետային միջոցների ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 173,580.2 հազ. դրամ և 160,592.0 հազ. դրամ (հավելված 5):

2017 և 2018 թվականներին Էրեբունու պահպանության բաժնի արտաբյուջետային ծախսերի համապատասխանաբար՝ 79.3%-ը և 82.2%-ը կազմել են աշխատողների վարձատրության ծախսերը, 10.8%-ը և 6.4%-ը՝ մասհանումները ՊՊԳ վարչությանը:

2018 թվականին բաժնի արտաբյուջետային միջոցների մուտքերը 22,517.5 հազ. դրամով գերազանցել են արտաբյուջետային միջոցների ծախսերը, և հաշվի առնելով տարեսկզբի մնացորդը, տարեվերջին բաժնի արտաբյուջետային հաշվի մնացորդը կազմել է 27,134.8 հազ. դրամ:

**ՊՊԳ վարչության Մալաթիայի պահպանության բաժնի վերաբերյալ**

2017 թվականին Մալաթիայի պահպանության բաժինը պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացրել է հինգ օբյեկտների պետական պահպանություն: Այդ նպատակով Մալաթիայի պահպանության բաժնին 2017 թվականին պետական բյուջեից հատկացումը կազմել է 101,168.0 հազ. դրամ, 2018 թվականին՝ 107,064.3 հազ. դրամ: 2017 թվականին օբյեկտների պետական պահպանության համար պայմանագրերով սահմանված հաստիքները գումարային կազմել են՝ միջին խմբի ոստիկաններ՝ 2.00 միավոր հաստիք և կրտսեր խմբի ոստիկաններ՝ 42.05 միավոր հաստիք: Տարվա ընթացքում բաժնի բոլոր բյուջետային հաստիքները համալրված էին:

2018 թվականի հունվարից որպես պետական պահպանության օբյեկտ ավելացել է ՀՀ քննչական կոմիտեի Մալաթիայի վարչական շենքը, որի պահպանության համար պայմանագրով սահմանվել է կրտսեր խմբի ոստիկանի 5.80 միավոր հաստիք: 2018 թվականի հունվարի 1-ից Մալաթիայի պահպանության բաժնի բյուջետային հաստիքները կազմել են 49.85 միավոր, որից միջին խմբի ոստիկաններ՝ 2.00 միավոր, կրտսեր խմբի ոստիկաններ՝ 47.85 միավոր հաստիք: 2018 թվականի հուլիսից դադարեցվել է ՀՀ կառավարության պահեստային տնտեսություն օբյեկտի պետական պահպանությունը՝ 8.45 միավոր հաստիքով, և բաժնի բյուջետային հաստիքները կազմել են 41.40 միավոր հաստիք: 2018 թվականի առաջին հինգ ամիսներին համալրված էին բոլոր 50 բյուջետային հաստիքները, իսկ տարեվերջին համալրված էր 37 բյուջետային հաստիք:

2017 թվականին Մալաթիայի պահպանության բաժնի բյուջետային աշխատողներին վճարվել է 97,174.7 հազ. դրամ աշխատավարձ ու պարգևատրումներ, ինչպես նաև 3,993.0 հազ. դրամ արձակման նպաստ: 2018 թվականին վճարվել է 104,987.6 հազ. դրամ աշխատավարձ ու պարգևատրումներ, 2,041.7 հազ. դրամ արձակման նպաստ, ինչպես նաև կատարվել է 35.0 հազ. դրամի գործուղման ծախս:

Տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի հիման վրա ծառայությունների մատուցման դիմաց 2017 և 2018 թվականներին Մալաթիայի պահպանության բաժնի արտաբյուջետային հաշվին մուտք է եղել համապատասխանաբար՝ 253,026.2 հազ. դրամ և 254,831.1 հազ. դրամ:

2017 և 2018 թվականներին Մալաթիայի պահպանության բաժնի արտաբյուջետային միջոցների ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 255,720.1 հազ. դրամ և 253,679.0 հազ. դրամ (հավելված 5):

2017 և 2018 թվականներին Մալաթիայի պահպանության բաժնի արտաբյուջետային ծախսերի համապատասխանաբար՝ 76.8%-ը և 83.2%-ը կազմել են աշխատողների վարձատրության ծախսերը, 7.9%-ը և 6.6%-ը՝ մասհանումները ՊՊԳ վարչությանը:

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Մալաթիայի պահպանության բաժնի արտաբյուջետային հաշվի մնացորդը կազմել է 4,560.7 հազ. դրամ:

**ՊՊԳ վարչության Կոտայքի պահպանության բաժնի վերաբերյալ**

2017 և 2018 թվականներին Կոտայքի պահպանության բաժինը պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացրել է երեք օբյեկտների պետական պահպանություն: Այդ նպատակով 2017 և 2018 թվականներին պետական բյուջեից Կոտայքի պահպանության բաժնին հատկացումը կազմել է համապատասխանաբար՝ 40,308.2 հազ. դրամ և 42,699.0 հազ. դրամ: Օբյեկտների պետական պահպանության համար պայմանագրերով սահմանված հաստիքները գումարային կազմել են՝ միջին խմբի ոստիկաններ՝ 1.00 միավոր հաստիք, կրտսեր խմբի ոստիկաններ՝ 15.09 միավոր հաստիք և հրաձիգներ՝ 3.65 միավոր հաստիք: 2017 և 2018 թվականներին համալրված էր 19 բյուջետային հաստիք, թափուր էր մեկ կրտսեր ոստիկանի հաստիքը:

2017 թվականին Կոտայքի պահպանության բաժնի բյուջետային աշխատողներին վճարվել է 39,627.6 հազ. դրամ աշխատավարձ ու պարգևատրումներ, ինչպես նաև 680.6 հազ. դրամ արձակման նպաստ: 2018 թվականին վճարվել է 41,979.4 հազ. դրամ աշխատավարձ ու պարգևատրումներ, ինչպես նաև 719.6 հազ. դրամ արձակման նպաստ:

Տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի հիման վրա ծառայությունների մատուցման դիմաց 2017 և 2018 թվականներին Կոտայքի պահպանության բաժնի արտաբյուջետային հաշվին մուտք է եղել համապատասխանաբար՝ 786,898.2 հազ. դրամ և 825,692.7 հազ. դրամ:

2017 և 2018 թվականներին Կոտայքի պահպանության բաժնի արտաբյուջետային միջոցների ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 788,457.2 հազ. դրամ (որից 1,559.0 հազ. դրամը՝ տարեսկզբի մնացորդ) և 813,389.6 հազ. դրամ (հավելված 5):

2017 և 2018 թվականներին Կոտայքի պահպանության բաժնի արտաբյուջետային ծախսերի համապատասխանաբար՝ 88.6%-ը և 94.6%-ը կազմել են աշխատողների վարձատրության ծախսերը, 6.8%-ը և 3.0%-ը՝ մասհանումները ՊՊԳ վարչությանը:

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կոտայքի պահպանության բաժնի արտաբյուջետային հաշվի մնացորդը կազմել է 12,303.1 հազ. դրամ:

**ՊՊԳ վարչության Հրազդանի պահպանության բաժնի վերաբերյալ**

2017 թվականին Հրազդանի պահպանության բաժինը պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացրել է ութ օբյեկտների պետական պահպանություն: Այդ նպատակով 2017 թվականին պետական բյուջեից Հրազդանի պահպանության բաժնին հատկացումը կազմել է 64,162.9 հազ. դրամ, 2018 թվականին՝ 70,236.8 հազ. դրամ: 2017 թվականին օբյեկտների պետական պահպանության համար պայմանագրերով սահմանված հաստիքները գումարային կազմել են՝ կրտսեր խմբի ոստիկաններ՝ 20.29 միավոր հաստիք և հրաձիգներ՝ 15.75 միավոր հաստիք: Տարվա ընթացքում բաժնի բոլոր բյուջետային հաստիքները համալրված էին: 2018 թվականին որպես պետական պահպանության օբյեկտ ավելացել է քաղաք Չարենցավանում ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքը, որի պահպանության համար պայմանագրով սահմանվել է կրտսեր խմբի ոստիկանի 5.49 միավոր հաստիք: 2018 թվականի սկզբից Հրազդանի պահպանության բաժնի բյուջետային հաստիքները կազմել են 41.53 միավոր, որից կրտսեր խմբի ոստիկաններ՝ 25.78 միավոր հաստիք, հրաձիգներ՝ 15.75 միավոր հաստիք: 2018 թվականի առաջին երեք ամիսներին համալրված էր 42 բյուջետային հաստիք, իսկ օգոստոս ամսից մինչև տարեվերջ համալրված էր 34 բյուջետային հաստիք:

2017 թվականին Հրազդանի պահպանության բաժնի բյուջետային աշխատողներին վճարվել է 61,289.4 հազ. դրամ աշխատավարձ ու պարգևատրումներ, ինչպես նաև 2,873.6 հազ. դրամ արձակման նպաստ: 2018 թվականին վճարվել է 68,560.6 հազ. դրամ աշխատավարձ ու պարգևատրումներ, ինչպես նաև 1,625.8 հազ. դրամ արձակման նպաստ:

Տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի հիման վրա ծառայությունների մատուցման դիմաց 2017 և 2018 թվականներին Հրազդանի պահպանության բաժնի արտաբյուջետային հաշվին մուտք է եղել համապատասխանաբար՝ 219,734.6 հազ. դրամ և 252,284.0 հազ. դրամ:

2017 և 2018 թվականներին Հրազդանի պահպանության բաժնի արտաբյուջետային միջոցների ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 216,970.9 հազ. դրամ և 256,087.9 հազ. դրամ (հավելված 5):

2018 թվականին բաժնի արտաբյուջետային միջոցների ծախսերը տարեսկզբի մնացորդի հաշվին 3,803.9 հազ. դրամով գերազանցել են արտաբյուջետային միջոցների մուտքերը:

2017 և 2018 թվականներին Հրազդանի պահպանության բաժնի արտաբյուջետային ծախսերի համապատասխանաբար՝ 81.4%-ը և 88.9%-ը կազմել են աշխատողների վարձատրության ծախսերը, 7.3%-ը և 6.0%-ը՝ մասհանումները ՊՊԳ վարչությանը:

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հրազդանի պահպանության բաժնի արտաբյուջետային հաշվի մնացորդը կազմել է 1,904.9 հազ. դրամ:

**ՊՊԳ վարչության Աշոցքի պահպանության բաժանմունքի վերաբերյալ**

2017 և 2018 թվականներին Աշոցքի պահպանության բաժանմունքը պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացրել է երկու օբյեկտների պետական պահպանություն: Այդ նպատակով 2017 թվականին պետական բյուջեից Աշոցքի պահպանության բաժանմունքին հատկացումը կազմել է 44,897.6 հազ. դրամ: 2018 թվականին բաժանմունքը այդ երկու օբյեկտների պահպանությունը իրականացրել է նույն անձնակազմով, որի համար պետական բյուջեից հատկացումը կազմել է 46,275.6 հազ. դրամ: Պետական պահպանության ենթակա երկու օբյեկտների համար պայմանագրերով սահմանված հաստիքները գումարային կազմել են՝ միջին խմբի ոստիկաններ՝ 1.00 միավոր հաստիք և կրտսեր խմբի ոստիկաններ՝ 19.20 միավոր հաստիք: Բաժնի բոլոր բյուջետային հաստիքները համալրված էին:

2017 թվականին Աշոցքի պահպանության բաժանմունքի բյուջետային աշխատողներին վճարվել է 44,793.7 հազ. դրամ աշխատավարձ ու պարգևատրումներ, ինչպես նաև կատարվել է 103.9 հազ. դրամի կապի ծախս: 2018 թվականին վճարվել է 44,097.0 հազ. դրամ աշխատավարձ ու

պարգևատրումներ, 2,080.8 հազ. դրամ արձակման նպաստ, ինչպես նաև կատարվել է 97.8 հազ. դրամի կապի ծախս:

Տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի հիման վրա ծառայությունների մատուցման դիմաց 2017 և 2018 թվականներին Աշոցքի պահպանության բաժանմունքի արտաբյուջետային հաշվին մուտք է եղել համապատասխանաբար՝ 11,658.0 հազ. դրամ և 12,180.7 հազ. դրամ: 2017 և 2018 թվականներին երեք հրաձիգներով պահպանության ենթակա կայուն պահակետի համար տնտեսավարողի հետ կնքված պայմանագրի շրջանակում բաժանմունքի արտաբյուջետային հաշվին մուտք է եղել տարեկան 4,800.0 հազ. դրամ: 2017 թվականին և 2018 թվականի առաջին հինգ ամիսներին երեք հրաձգի փոխարեն համալրված է եղել հրաձգի մեկ հաստիք:

2017 և 2018 թվականներին Աշոցքի պահպանության բաժանմունքի արտաբյուջետային միջոցների ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 11,658.0 հազ. դրամ և 11,344.5 հազ. դրամ (հավելված 5):

2017 և 2018 թվականներին Աշոցքի պահպանության բաժանմունքի արտաբյուջետային ծախսերի համապատասխանաբար՝ 74.5%-ը և 78.0%-ը կազմել են աշխատողների վարձատրության ծախսերը, 2.5%-ը և 4.2%-ը՝ մասհանումները ՊՊԳ վարչությանը:

2018 թվականի տարեվերջին Աշոցքի պահպանության բաժանմունքի արտաբյուջետային հաշվի մնացորդը կազմել է 836.2 հազ. դրամ:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՀՀ կառավարությանը՝

– հաշվի առնելով, որ ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը պահպանությունը իրականացնում է ինչպես պետական բյուջեի, այնպես էլ արտաբյուջետային միջոցների հաշվին, որի ընթացքում՝ աշխատողների հաստիքները միայն ֆինանսավորման աղբյուրով պայմանավորված տարանջատվում են բյուջետային և արտաբյուջետային հաստիքների, բյուջետային հաստիք զբաղեցնող աշխատողները ներգրավվում են արտաբյուջետային գործառույթների իրականացմանը, ստորաբաժանումների արտաբյուջետային եկամուտներից մասհանումների չափաքանակների հաշվարկը իրատեսական չէ և առկա են էական փաստացի շեղումներ, ֆինանսական խախտումները հետագայում բացառելու և ֆինանսական հոսքերի կառավարման, ծառայության մատուցման ու սոցիալական ապահովության

ռիսկերը նվազեցնելու համար նպատակահարմար է քննարկել ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կողմից պայմանագրային հիմունքներով մատուցվող ծառայությունների դիմաց վճարումները պետական բյուջե մուտքագրելու հնարավորությունը,

– հաշվի առնելով, որ ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը տարիներ շարունակ չի իրականացրել ՀՀ կառավարության 29.04.2004թ. թիվ 1008-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների ցանկում ընդգրկված՝ ՀՀ Ազգային ժողովի շենքի՝ հարակից շինություններով, ՀՀ առաջին ատյանի դատարանների ու նրանց նստավայրերի, տնտեսական դատարանի Երևանի, Գյումրու, Վայքի, Սևանի, Վեդու նստավայրերի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների շենքերի պետական պահպանությունը, ինչպես նաև այն, որ պետական բյուջեի զգալի միջոցների հաշվին իրականացվել է այդ ցանկում չընդգրկված՝ Երևանում գտնվող «Հ.Ծարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ-ի պետական պահպանությունը, անհրաժեշտ է վերանայել ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ցանկը:

### ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությանը՝

– պետական բյուջեի միջոցները նպատակային օգտագործելու և ֆինանսական խախտումների ռիսկերից խուսափելու համար՝ բացառել ՊՊԳ վարչության բյուջետային հաստիքներ զբաղեցնող աշխատողների ընդգրկումը արտաբյուջեի շրջանակում կնքված պայմանագրերով տնտեսավարողների օբյեկտների պահպանության վերակարգերում,

– հաշվի առնելով, որ տնտեսավարողների հետ ծախսի նորմատիվներից պակաս գնով կամ հավելյալ անձնակազմով պահպանության իրականացումը առաջացնում է ծառայության մատուցման, բյուջետային և արտաբյուջետային միջոցների օգտագործման, ֆինանսական հոսքերի կառավարման և հաշվառման ռիսկեր, անհրաժեշտ է իրականացնել մշտական հսկողություն ստորաբաժանումների կողմից պայմանագրերի կնքման գործընթացի նկատմամբ, ինչպես նաև վերանայել պակաս գնով կնքված պայմանագրերը,

– ՊՊԳ վարչության և ստորաբաժանումների ֆինանսատնտեսական բնականոն գործունեությունը տարեկան հաստատված նախահաշիվներին

համապատասխան իրականացնելու համար՝ ստորաբաժանումների կողմից ՊՊԳ վարչությանը կատարվող մասհանումների չափաքանակները սահմանել արտաբյուջետային եկամուտների իրատեսական հաշվարկների հիման վրա, ձեռնարկել միջոցներ տնտեսավարողների առկա դեբիտորական պարտքերը մարելու ու հետագայում դրանք հնարավոր նվազագույնի հասցնելու ուղղությամբ և պահպանության ծառայության մատուցման պայմանագրերում վճարումների ուշացումների համար սահմանել տույժ,

– ապահովել վերականգնման ենթակա գումարների մուտքը ստորաբաժանումների արտաբյուջետային հաշիվներին,

– ՊՊԳ վարչության կառուցվածքը, հաստիքակազմը և ֆինանսական հոսքերի կառավարումը օպտիմալացնելու նպատակով քննարկել ՊՊԳ վարչության կառուցվածքում ավտոտնտեսություն ստորաբաժանման առկայության անհրաժեշտությունը:

***Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացության վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվություն:***

Հավելված 1

ՀՀ ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքեր ու շինություններ

| |
|---|
| Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի շենք՝ հարակից շինություններով |
| Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի շենք |
| Հայաստանի Հանրապետության կառավարություն (3 մասնաշենքերը) |
| Մարդու իրավունքների պաշտպանի նստավայր |
| Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության շենք |
| Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի շենքեր |
| Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանների և նրանց նստավայրերի, տնտեսական դատարանի Երևանի, Գյումրու, Վայքի, Սևանի, Վեդու նստավայրերի, վերաքննիչ, վճռաբեկ դատարանների շենքեր |
| Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատիժների իրականացման վրա հսկողություն իրականացնող վարչության, Երևան քաղաքի դատախազության, Երևան քաղաքի համայնքների և մարզերի դատախազությունների կենտրոնների, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական և կայազորների զինվորական դատախազությունների շենքեր |
| Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության, Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության շենքեր |
| Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատակազմի տարածաշրջանային ծրագրերի իրականացման վարչության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի շենքեր |
| Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի շենքեր |
| Երևանի քաղաքապետարանի շենք |
| «Հայաստանի ազգային հեռուստատեսություն» ՓԲԸ |
| «Հայաստանի ազգային ռադիո» ՓԲԸ |
| «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ |
| «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ |
| Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով սահմանված՝ հատուկ պահպանության ենթակա օբյեկտներ |
| Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (Մատենադարան) |
| Հայոց ցեղասպանության թանգարան, Մեծ եղեռնի հուշահամալիր |
| Հայաստանի ազգային պատկերասրահ |
| Կոմիտասի թանգարան-ինստիտուտ |
| Հայաստանի պատմության թանգարան |
| Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան |
| Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան |
| Ռուսական արվեստի թանգարան |
| Հայաստանի ազգային գրադարան |
| «Էրեբունի» թանգարան |
| «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի Շենգավիթի և Կարմիր բլրի մասնաճյուղերի շենքեր |
| «Երևանի պատմության թանգարան» ՊՈԱԿ |
| «Հ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ |
| «Ա. Իսահակյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ |

| |
|---|
| «Ե. Չարենցի տուն-թանգարան» ՊՈԱԿ |
| «Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան» ՊՈԱԿ-ի մասնաճյուղ՝ Ա. Բակունցի տուն-թանգարան |
| «Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարան» ՊՈԱԿ |
| «Հրազդանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ |
| «Օրբելի եղբայրների տուն-թանգարան» ՊՈԱԿ |
| «Ն. Ադոնցի անվան Սիսիանի պատմության թանգարան» ՊՈԱԿ |
| «ՀՀ Գեղարքունիքի մարզի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ |
| «Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ |
| «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղ՝ Սիսիանի պատկերասրահ |
| «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղ՝ Հրազդանի պատկերասրահ |
| «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղ՝ Մարտունու պատկերասրահ |
| «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղ՝ ակադեմիկոս Հ. Բունիաթյանի անվան Գավառի պատկերասրահ |
| «Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնաճյուղ՝ Դիլիջանի ժողովրդական արվեստի թանգարան |
| «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի մասնաճյուղ՝ «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարան |
| «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ |
| «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ |
| «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հրաձգության օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ |
| «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ (2 մասնաշենք) |
| «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի ԿՖՖՓԱՊ-ի մասնաճյուղ |
| «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի Արարատի մարզային մասնաճյուղ |
| «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի Լոռու մարզային մասնաճյուղ |
| «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի Կոտայքի մարզային մասնաճյուղ |
| «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի Շիրակի մարզային մասնաճյուղ |
| Իրանի Իսլամական Հանրապետության մզկիթ |
| Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի շենք |
| Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Հայաստանի Հանրապետության մետաղափորձական վերահսկողության տեսչության շենք |
| Նուբարաշենի հոգեբուժական հիվանդանոցի ուժեղացված հսկողության և դատահոգեբուժական փորձաքննության բաժանմունքներ |
| Կիևյան մեծ կամուրջ, Հաղթանակի կամուրջ, Դավթաշենի կամուրջ |
| Ապարանի, Հալավարի, Սևաբերդի, Դավիթ Բեկի, Ձողազի, Հախումի, Տավուշի, Այգեձորի, Կառնուտի, Մանթաշի, Վարդաքարի, Սառնաղբյուրի, Հերհերի, Արփի լճի, Թավշուտի, Ազատի, Չանգակատան ջրամբարներ, «Արփա-Սևան» ջրային թունելի 3 տեղամասեր |
| ՀՀ Արագածոտնի մարզ՝ Աշտարակի N 1 օրվա կարգավորող ջրամբար, Աշտարակի N 2 օրվա կարգավորող ջրամբար, Չլկանների կապտաժ, Եգնակի օրվա կարգավորող ջրամբար, Եգնակի պոմպակայան և Ղազարավանի կապտաժ |
| ՀՀ Արարատի մարզ՝ Վեդու օրվա կարգավորող ջրամբար, Արևշատի օրվա կարգավորող ջրամբար և Արարատյան 1.2 պոմպակայան |
| ՀՀ Արմավիրի մարզ՝ Շահումյանի օրվա կարգավորող ջրամբար, Արմավիրի օրվա կարգավորող ջրամբար և Մյասնիկյանի օրվա կարգավորող ջրամբար |
| ՀՀ Գեղարքունիքի մարզ՝ Սևանի N 1 օրվա կարգավորող ջրամբար, Գոմաձորի օրվա կարգավորող ջրամբար, Հացառատի պոմպակայան, Միդեյի Դարի օրվա կարգավորող ջրամբար |
| ՀՀ Լոռու մարզ՝ Ստեփանավանի օրվա կարգավորող ջրամբար, Տաշիրի օրվա կարգավորող ջրամբար, Սպիտակի օրվա կարգավորող ջրամբար-1 և Սպիտակի օրվա կարգավորող ջրամբար-2 |
| ՀՀ Կոտայքի մարզ՝ Կենտրոնական օրվա կարգավորող ջրամբար և Հարավային օրվա կարգավորող ջրամբար |

| |
|---|
| ՀՀ Շիրակի մարզ՝ Արթիկի 1 օրվա կարգավորող ջրամբար և Արթիկի 3 օրվա կարգավորող ջրամբար |
| ՀՀ Սյունիքի մարզ՝ օրվա կարգավորող ջրամբար-1, օրվա կարգավորող ջրամբար-2, օրվա կարգավորող ջրամբար-3, Բաղաբերդի օրվա կարգավորող ջրամբար-1, Շինարարների օրվա կարգավորող ջրամբար-2, Սեթենց կապտաժ, Մեղրիի օրվա կարգավորող ջրամբար և Շաքեի կապտաժ |
| ՀՀ Վայոց ձորի մարզ՝ Որոտանի օրվա կարգավորող ջրամբար-3, Սառնաղբյուրի օրվա կարգավորիչ ջրամբար, Ջրասարի կապտաժ և Ջերմուկի օրվա կարգավորող ջրամբար |
| ՀՀ Տավուշի մարզ՝ Անապատի օրվա կարգավորող ջրամբար, Հունուտի օրվա կարգավորող ջրամբար և Բլդանի ջրամբարների մաքրման կայան |
| Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն |
| Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի շենք |

Հավելված 2

ՀՀ ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա կարևորագույն նշանակության օբյեկտներ

| |
|---|
| Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ |
| «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ |
| Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի Արծվանիկի և Ողջիի տնտեսությունները՝ իրենց թունելային համակարգով |
| Հրազդանի ՋԷԿ |
| Երևանի ՋԷԿ |
| Սևան-Հրազդանյան ՀԷԿ-երի կասկադ |
| Որոտանի ՀԷԿ-երի կասկադ |
| Գազի ստորգետնյա պահեստարաններ և դրանց սպասարկման կառույցներ |
| «Արմենթել» ՀՁ» ՓԲԸ-ի հանրապետական և միջազգային համակցման կենտրոն |
| Այրում-Ախթալա հատվածի թունելը՝ 2 սողանցքով |
| Վանաձոր-Փամբակ հատվածի երկուական կամուրջները և ուղեցույցները |
| Խմելու ջրի աղբյուրներ՝ Արարատյան 1-2, Արարատյան 3-4, Գառնու, Կաթնաղբյուրի, Արզնու, Արզական-Գյումուշի, Ապարանի, Շոր-Շորի, Առինջի, Ծարավաղբյուրի, Ձորաղբյուրի, Երևանի ՀԷԿ-ի |
| Օրվա կարգավորող ջրամբարներ՝ Ջրվեժի, Միուրի, Ձորաղբյուրի, Էլեկտրալամպերի, Քանաքեռի (ներքին), Քանաքեռի (վերին),Կովկասյան, Աբովյան պուրակի, Քասախի, Դավթաշենի (ներքին), Դավթաշենի (վերին), կաթի կոմբինատի, Լուկաշինի, Կիլիկիայի, Արարատյան, Խարբերդի, Արին Բերդի, Դինամոյի, Մարաշի |
| Կապտաժային կառուցվածքներ, պոմպակայաններ, մաքրման կայաններ, արտեզյան հորեր, օրվա կարգավորող ջրամբարներ՝ |
| ՀՀ Արագածոտնի մարզ՝ 6 հատ |
| ՀՀ Արարատի մարզ՝ 5 հատ |
| ՀՀ Արմավիրի մարզ՝ 3 հատ |
| ՀՀ Գեղարքունիքի մարզ՝ 3 հատ |
| ՀՀ Լոռու մարզ՝ 10 հատ |
| ՀՀ Կոտայքի մարզ՝ 6 հատ |
| ՀՀ Շիրակի մարզ՝ 9 հատ |
| ՀՀ Սյունիքի մարզ՝ 5 հատ |
| ՀՀ Վայոց ձորի մարզ՝ 1 հատ |
| ՀՀ Տավուշի մարզ՝ 8 հատ |
| Ճառագայթային, քիմիական և կենսաբանական վտանգավոր օբյեկտներ՝ |
| Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոց |

Հավելված 4

ՊՊԳ վարչության և ստորաբաժանումների դեբիտորական պարտքը 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազ. դրամ

| Ստորաբաժանման անվանումը | Դեբիտորական պարտք |
|---|---|
| ՊՊԳ վարչություն | 570.0 |
| ՊՊԳՎ ԿՕ և ՅՁՊ գունդ | 3,439.1 |
| ՊՊԳՎ ԱԱ և ԳՊ բաժին | 9,781.0 |
| ՊՊԳՎ Թիվ 1 ռազմ. ջոկատ | - |
| ՊՊԳՎ Թիվ 3 ռազմ. ջոկատ | 13,879.2 |
| ՊՊԳՎ Քանաքեռ-Զեյթունի պահպանության բաժին | 11,508.2 |
| ՊՊԳՎ Արաբկիրի պահպանության բաժին | 7,166.0 |
| ՊՊԳՎ Էրեբունու պահպանության բաժին | 8,723.7 |
| ՊՊԳՎ Նոր-Նորքի պահպանության բաժին | 8,112.4 |
| ՊՊԳՎ Մաշտոցի պահպանության բաժին | 3,342.3 |
| ՊՊԳՎ Կենտրոնական պահպանության բաժին | 20,308.5 |
| ՊՊԳՎ Մալաթիայի պահպանության բաժին | 17,412.5 |
| ՊՊԳՎ Շենգավիթի պահպանության բաժին | 13,743.3 |
| ՊՊԳՎ Աշտարակի պահպանության բաժանմունք | 2,100.2 |
| ՊՊԳՎ Ապարանի պահպանության բաժանմունք | 1,644.1 |
| ՊՊԳՎ Գյումրու պահպանության բաժին | 5,259.7 |
| ՊՊԳՎ Աշոցքի պահպանության բաժանմունք | 110.0 |
| ՊՊԳՎ Արթիկի պահպանության բաժանմունք | 398.2 |
| ՊՊԳՎ Արարատի պահպանության բաժին | 0.4 |
| ՊՊԳՎ Արտաշատի պահպանության բաժանմունք | 4,086.2 |
| ՊՊԳՎ Մասիսի պահպանության բաժանմունք | 3,791.9 |
| ՊՊԳՎ Արմավիրի  պահպանության բաժանմունք | 1,054.5 |
| ՊՊԳՎ Վաղարշապատի պահպանության բաժին | 848.2 |
| ՊՊԳՎ Եղեգնաձորի պահպանության բաժանմունք | 2,877.6 |
| ՊՊԳՎ Ջերմուկի պահպանության բաժին | 1,850.5 |
| ՊՊԳՎ Գորիսի պահպանության բաժանմունք | 1,898.9 |
| ՊՊԳՎ Կապանի պահպանության բաժին | 10,744.8 |
| ՊՊԳՎ Մեղրիի պահպանության բաժանմունք | 2,976.0 |
| ՊՊԳՎ Սիսիանի պահպանության բաժանմունք | 373.2 |
| ՊՊԳՎ Վանաձոր պահպանության բաժին | 2,250.3 |
| ՊՊԳՎ Թումանյանի պահպանության բաժին | 944.4 |
| ՊՊԳՎ Սպիտակի պահպանության բաժանմունք | 628.2 |
| ՊՊԳՎ Տաշիրի պահպանության բաժանմունք | 23.0 |
| ՊՊԳՎ Կոտայքի պահպանության բաժին | 21,243.3 |
| ՊՊԳՎ Հրազդանի պահպանության բաժին | 10,762.8 |
| ՊՊԳՎ Դիլիջանի պահպանության բաժանմունք | 806.9 |
| ՊՊԳՎ Իջևանի պահպանության բաժին | 6,268.1 |
| ՊՊԳՎ Տավուշի  պահպանության բաժանմունք | 10.0 |
| ՊՊԳՎ Սևանի պահպանության բաժանմունք | 760.2 |
| ՊՊԳՎ Վարդենիսի  պահպանության բաժանմունք | 1,072.5 |
| ՊՊԳՎ Մարտունու  պահպանության բաժանմունք | 1,410.3 |
| ՊՊԳՎ Գավառի  պահպանության բաժանմունք | 758.7 |
| Ընդամենը | 204,939.3 |

Հավելված 5

2017 և 2018 թվականներին ՊՊԳ վարչության առանձին ստորաբաժանումների արտաբյուջետային միջոցների ծախսերը
(հազ. դրամ)

Կենտրոնական պահպանության բաժին

| Հոդված | 2017 թվական | 2018 թվական |
|---|---|---|
| Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 334,824.10 | 357,614.60 |
| Արձակման նպաստ | 945.2 | 1,372.00 |
| Մասհանում ՊՊԳ վարչությանը | 59,439.50 | 63,493.60 |
| Վճարում ՊՊԳ վարչությանը ապրանքների դիմաց | 39,800.80 | 21,506.40 |
| Տրանսպորտային ծախսեր | 40,105.40 | 21,016.00 |
| Էներգետիկ ծառայություններ | 200.8 | 172.3 |
| Կապի ծառայություններ | 915.7 | 618.2 |
| Գործուղման ծախսեր | 35 | 70 |
| Գումարի վերադարձ տնտեսավարողներին | 113.2 | 202 |
| Ընդամենը | 476,379.70 | 466,065.10 |
| Էրեբունու պահպանության բաժին | | |
| Հոդված | 2017 թվական | 2018 թվական |
| Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 137,600.30 | 131,989.20 |
| Մասհանում ՊՊԳ վարչությանը | 18,677.40 | 10,200.00 |
| Վճարում ՊՊԳ վարչությանը ապրանքների դիմաց | 9,075.20 | 9,736.20 |
| Տրանսպորտային ծախսեր | 6,285.10 | 7,107.20 |
| Էներգետիկ ծառայություններ | 1,331.10 | 1,053.00 |
| Կապի ծառայություններ | 536.1 | 506.4 |
| Գործուղման ծախսեր | 75 | - |
| Ընդամենը | 173,580.20 | 160,592.00 |
| Մալաթիայի պահպանության բաժին | | |
| Հոդված | 2017 թվական | 2018 թվական |
| Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 196,415.20 | 211,041.40 |
| Արձակման նպաստ | 1,085.30 | 1,297.70 |
| Մասհանում ՊՊԳ վարչությանը | 20,207.10 | 16,884.00 |
| Վճարում ՊՊԳ վարչությանը ապրանքների դիմաց | 20,756.90 | 11,957.90 |
| Տրանսպորտային ծախսեր | 15,808.10 | 10,191.00 |
| Էներգետիկ ծառայություններ | 955 | 552.9 |
| Կոմունալ ծառայություններ | 65.2 | 58.1 |
| Կապի ծառայություններ | 427.3 | 245.3 |
| Գործուղման ծախսեր | - | 19 |
| Նախագծանախահաշվային փաստաթղթեր | - | 405 |
| Գումարի վերադարձ տնտեսավարողներին | - | 1,025.70 |
| Ընդամենը | 255,720.10 | 253,678.00 |
| Կոտայքի պահպանության բաժին | | |
| Հոդված | 2017 թվական | 2018 թվական |
| Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 698,710.60 | 769,207.50 |
| Արձակման նպաստ | 1,466.70 | 1,890.50 |
| Մասհանում ՊՊԳ վարչությանը | 53,972.00 | 24,268.00 |

| | | |
|---|---|---|
| Վճարում ՊՊԳ վարչությանը պայմանքների դիմաց | 17,867.00 | 6,542.00 |
| Տրանսպորտային ծախսեր | 15,797.40 | 11,082.70 |
| Էներգետիկ ծառայություններ | 162.8 | 132.2 |
| Կապի ծառայություններ | 196.5 | 248 |
| Գործուղման ծախսեր | 80 | - |
| Գումարի վերադարձ տնտեսավարողներին | 204.2 | 18.7 |
| Ընդամենը | 788,457.20 | 813,389.60 |
| Հրազդանի պահպանության բաժին | | |
| Հոդված | 2017 թվական | 2018 թվական |
| Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 176,634.60 | 227,649.50 |
| Արձակման նպաստ | 1,952.20 | 952.8 |
| Մասհանում ՊՊԳ վարչությանը | 15,896.40 | 15,324.00 |
| Վճարում ՊՊԳ վարչությանը պայմանքների դիմաց | 9,944.80 | 3,575.90 |
| Տրանսպորտային ծախսեր | 11,533.20 | 7,836.90 |
| Էներգետիկ ծառայություններ | 771.9 | 379.5 |
| Կոմունալ ծառայություններ | - | 50.6 |
| Կապի ծառայություններ | 9.8 | 78.7 |
| Գործուղման ծախսեր | 228 | - |
| Նախագծանախահաշվային փաստաթղթեր | - | 240 |
| Ընդամենը | 216,970.90 | 256,087.90 |
| Աշոցքի պահպանության բաժանմունք | | |
| Հոդված | 2017 թվական | 2018 թվական |
| Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 8,683.20 | 8,853.40 |
| Արձակման նպաստ | - | 1,122.70 |
| Մասհանում ՊՊԳ վարչությանը | 286 | 480 |
| Վճարում ՊՊԳ վարչությանը պայմանքների դիմաց | 615.6 | 160.9 |
| Տրանսպորտային ծախսեր | 1,748.80 | 389 |
| Էներգետիկ ծառայություններ | 241.6 | 249.8 |
| Կոմունալ ծառայություններ | 8.8 | 11.7 |
| Գործուղման ծախսեր | 74 | 77 |
| Ընդամենը | 11,658.00 | 11,344.50 |

Հավելված 3

2017 և 2018 թվականներին ՊՊԳ վարչությանը ստորաբաժանումների կողմից կատարված մասհանումներ

հազ. դրամ

| Հ/Հ | Ստորաբաժանում | 2017 թվական | | 2018 թվական | |
|---|---|---|---|---|---|
| | | սահմանված | փաստացի | սահմանված | փաստացի |
| 1 | Քանաքեռ Զեյթունի պահպանության բաժին | 12,300.0 | 8,681.4 | 8,472.0 | (11,932.0) |
| 2 | Արաբկիրի պահպանության բաժին | 15,450.0 | 24,824.0 | 13,200.0 | 13,105.0 |
| 3 | Էրեբունի պահպանության բաժին | 12,120.0 | 18,677.4 | 10,200.0 | 10,200.0 |
| 4 | Նոր-Նորքի պահպանության բաժին | 17,040.0 | 17,120.6 | 6,000.0 | 6,000.0 |
| 5 | Մաշտոցի պահպանության բաժին | 13,596.0 | 20,139.6 | 9,600.0 | 9,600.0 |
| 6 | Կենտրոնականի պահպանության բաժին | 32,904.0 | 59,439.6 | 32,496.0 | 63,493.6 |
| 7 | Մալաթիա պահպանության բաժին | 17,280.0 | 20,207.1 | 16,896.0 | 16,884.0 |
| 8 | Շենգավիթ պահպանության բաժին | 16,188.0 | 13,561.0 | 15,456.0 | 19,873.0 |
| 9 | ԿՕՊ և ՀԶՊ գունդ | 17,448.0 | 33,818.5 | 13,944.0 | 13,946.7 |
| 10 | ԱԱ և ԳՊ բաժին | 17,490.0 | 21,486.1 | 14,616.0 | 14,592.0 |
| 11 | Թիվ 1 ռազմականացված ջոկատ | 14,496.0 | 14,492.1 | 4,200.0 | 4,165.0 |
| 12 | Թիվ 3 ռազմականացված ջոկատ | 17,850.0 | 17,855.8 | 6,960.0 | (4,240.0) |
| 13 | Ապարանի պահպանության բաժանմունք | 7,788.0 | 10,650.6 | 4,512.0 | 4,512.0 |
| 14 | Աշտարակի պահպանության բաժանմունք | 9,060.0 | 15,957.5 | 7,320.0 | 7,320.0 |
| 15 | Աշոցքի պահպանության բաժանմունք | 286.0 | (274.4) | 480.0 | 480.0 |
| 16 | Արարատի պահպանության բաժին | 2,786.8 | 4,386.7 | 2,100.0 | (3,213.1) |
| 17 | Արթիկի պահպանության բաժանմունք | 1,020.0 | 1,820.0 | 1,296.0 | 1,400.2 |
| 18 | Արմավիրի պահպանության բաժանմունք | 1,750.0 | (40.5) | 960.0 | 1,631.9 |
| 19 | Արտաշատի պահպանության բաժանմունք | 2,652.0 | 3,137.0 | 3,144.0 | 3,144.0 |
| 20 | Գյումրիի պահպանության բաժին | 14,196.0 | 14,196.0 | 9,840.0 | 9,585.8 |
| 21 | Գորիսի պահպանության բաժանմունք | 6,936.0 | 9,541.2 | 3,048.0 | 3,154.7 |
| 22 | Դիլիջանի պահպանության բաժանմունք | 7,212.0 | 7,212.0 | 1,200.0 | 1,200.0 |
| 23 | Եղեգնաձորի պահպանության բաժանմունք | 3,342.0 | 3,342.0 | 2,400.0 | 2,400.0 |
| 24 | Թումանյանի պահպանության բաժին | 14,976.0 | 10,531.5 | 13,236.0 | 13,236.0 |
| 25 | Իջևանի պահպանության բաժին | 2,860.0 | 766.7 | 840.0 | 28,316.3 |
| 26 | Գավառի պահպանության բաժանմունք | 2,586.0 | 883.1 | 448.8 | (1,536.2) |
| 27 | Կապանի պահպանության բաժին | 12,480.0 | 10,204.0 | 8,760.0 | 11,837.1 |
| 28 | Կոտայքի պահպանության բաժին | 53,972.0 | 53,972.0 | 24,268.0 | 24,268.0 |
| 29 | Հրազդանի պահպանության բաժին | 14,976.0 | 15,896.4 | 15,324.0 | 15,324.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 30 | Մասիսի պահպանության բաժանմունք | 5,760.0 | 5,601.8 | 2,640.0 | (1,351.6) |
| 31 | Մարտունու պահպանության բաժանմունք | 2,820.0 | 5,906.0 | 1,608.0 | 1,608.0 |
| 32 | Մեղրիի պահպանության բաժանմունք | 5,436.0 | 6,036.0 | 1,560.0 | 1,560.0 |
| 33 | Ջերմուկի պահպանության բաժանմունք | 580.0 | 453.9 | 960.0 | 1,086.1 |
| 34 | Սպիտակի պահպանության բաժանմունք | 751.6 | 2,567.9 | 1,248.0 | 1,252.8 |
| 35 | Սևանի պահպանության բաժանմունք | 2,715.5 | 2,092.9 | 732.0 | 1,354.6 |
| 36 | Սիսիանի պահպանության բաժանմունք | 7,128.0 | 6,786.4 | 3,360.0 | 3,360.0 |
| 37 | Վաղարշապատի պահպանության բաժին | 5,376.0 | 5,361.0 | 2,400.0 | 2,401.1 |
| 38 | Վանաձորի պահպանության բաժին | 5,400.0 | 5,400.0 | 4,200.0 | 4,200.0 |
| 39 | Վարդենիսի պահպանության բաժանմունք | 5,280.0 | 6,085.0 | 3,360.0 | 3,360.0 |
| 40 | Տաշիրի պահպանության բաժանմունք | 2,909.8 | 2,823.4 | - | - |
| 41 | Տավուշի պահպանության բաժանմունք | 3,396.0 | 6,647.2 | 1,956.0 | 1,956.0 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **410,593.7** | **488,235.0** | **275,240.8** | **299,518.6** |